№ 195 ՈՒՐԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
1915
ՔԱՌԱՍՈՒՆԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՈՒՐԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 195

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I. երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Ուրբաթ, սեպտեմբերի 4-ին, արտիստ Ս. ԹՈՐՈՍԵԱՆԸ, մասնակցութեամբ արտիստ-արտիստուհիների, երկրորդ անգամ կը ներկայացնի ասիական ուրախ օպէրէտ՝

ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

(Շրջիկ մանրավաճառ)
4 գործ. Թարգմ. Ս. Մաղալեանի
Արեւելեան օրկէստր՝ Թարգմ. Սեդրակ Մաղալեանի ղեկավարութեամբ:
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ $8^1/_4$-ին:
Տեղերի գները 50 կ.-ից մինչև 1 ր. 25 կ.:
Կարգադրիչ՝ Ս. ԹՈՐՈՍԵԱՆ
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են—չափահասները 50-ական կոպ., կանայք և աշակերտները 25-ական կոպէկ:
առ. 610. 2—2

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՅՆՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌՕՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7—29
առ. (ա. օ.) 504. 100—30

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփօրից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով: Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից:
(ա. օ.) առ. 515. 100—21

ԿԸ ՓՆՏՐՈՒԻՆ
պարոնայք Կարապետ Սարգիսեան և Արմենակ Պօղոսեան. 1914 հոկտ. 26-ին Թաւրիզից նամակ մը ձգած են Ամերիկա իրենց բարեկամին, ուրկէ վերջ մեկնած են Ուրմի:
Իմացնել «Մշակի» խմբագրութեան
առ. 617. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(Զուբալովի անուան)
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ Խմբակցութիւնը
Այսօր, ուրբաթ, սեպտեմբերի 4-ին
ՍԵԶՕՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ
Կը ներկայացնէ
Նոր փոխադրված Րաֆֆիի յայտնի վէպից
ԴԱՒԻԹ-ԲԷԿ
Պատմ. դրամ. 7 պատկ., Ա. Խ.
1) պատկ. ՀՐԴԵՀ, 2) պատկ. ԿՐԱԿԻՑ ԱԶԱՏՎԱԾԸ, 3) պատկ. ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿՈՉԸ, 4) պատկ. ՍԷՐՆ Ե ԴԱՏԱՒՈՐԸ, 5) պատկ. ԴԻՐՔԵՐԻ ՎՐԱ, 6) պատկ. ՎԱՅ ՈՒՐԱՑՈՂԻՆ, 7) պատկ. ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԵԱՆ ԿՐԱԿ:
Մասնակցում են—Տ. Յասմիկ, օր. Վանեցեան, պ. պ. Ամօ-Խարազեան, Ազաթաբեան, Գաւրօշ, Գօլանջեան, Սանիկեան, Երամեան, Ղուշչեան, Լազարեան, Ծոնեան, Մարաթեան, Ռուսեան և ուրիշները:
Սկիզբն է երեկ. ժ. 8-ին
Ռեժիսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Ա. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ և Մ. ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆ
615. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելօզօրօվ
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկի
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշեր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Հ. աւ. կ.) առ 970. 100—83

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

(Պետ. Հեռ. Գործ.)

Պետրօգրադ, 2 սեպտեմբերի

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ II, Կայսր և Ինքնակալ Համայն Ռուսաստանի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն, և այլն, և այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին:

Թշնամու ներս խուժումը Մեր հայրենիքի սահմանները պահանջում է նորից ուժեղացնել երիտասարդ ույժերով Մեր քաջարի զօրքը, որ ահա երկրորդ տարին է կրում է կռուի ծանրութիւնները:

Ըստ ամին՝ համաձայն Պետական Դումայից և Պետական Խորհրդից հաւանութիւն գտած ու այս օգոստոսի 22-ին Մեր հաստատած օրէնքի, ներկայումս Մենք անհրաժեշտ համարեցինք ձեռնարկել 2-րդ կարգի պետական երկրապահ զինուորների զօրակոչին:

Զօրակոչին ենթակայ երկրապահ զինուորների հասակը և այն վայրերը, որտեղից նրանք կոչվելու են, կորոշվեն Մեր հրամաններով՝ յանուն կառավարիչ սենատի:

Տրված է օգոստոսի 31-ին, Կայանում, 1915 թ. ամառը, Մեր Թագաւորութեան 21-րդ տարում:

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է.

ՆԻԿՈԼԱՅ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 սեպտեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական: Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Օգոստոսի 31-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր:

Օլթիի ուղղութեամբ՝ Իշխան շրջանում մեր հետախոյզները ցրեցին թիւրքերին:

Մանազկերտի շրջանում մեր հեծելազօրն ընդհարվում է թիւրքաց հեծելագնդի հետ, որը ետ է մղված դէպի արեւմուտք:

Վանի շրջանում մեր հեծելազօրը հետապնդում է քիւրդերին:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ.—Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ ռազմամթերքների զգալի պակասութեան պատճառով վերջին ժամանակ որոշ յուզմունք է նկատվում զօրաձակատում թիւրք զօրքերի մէջ:

Լուր է պտտվում, թէ դաշնակիցների ռազմանաւերը ռմբակոծում են թիւրքաց զօրքերին Մադիտոսի մօտ:

ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Բուխարէստից հեռագրում են, թէ ըստ մասնաւոր տեղեկութիւնների, որոնք ստացվել են Կ. Պոլսից, վերջին օրերս թիւրքաց մայրաքաղաք են բերվել 4 վագոն հայ երեխաներ, որոնց Անատոլիայի վերջին ջարդերի ժամանակ կորցրել են իրանց ծնողներին: Թիւրք կառավարութիւնը կարգադրել է այդ երեխաներին յանձնել կրթութեան թիւրք ընտանիքներին, յոյս ունենալով այդպիսով թիւրքացնել նրանց: Դրան եռանդուն կերպով հակառակում է հայոց պատրիարքը, որ պահանջում է որբերին յանձնել Հայկական Բարեգործական ընկ. կամ իրան խնամքին: Կ. Պոլսի հայկական [illegible] թիւն: Բոլոր ջարդերի, պատիժների և աքսորումների մէջ պարզ տեսնվում է թիւրք կառավարութեան մտադրութիւնը՝ ջնջել հայ ազգաբնակութիւնը Անատոլիայում կամ երկար ժամանակ թուլացնել նրա ազդեցութիւնը և նշանակութիւնը այդ երկրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(Առաջնորդող յօդուած «Daily News»-ի)

Աւելի մեծ կռուի ժխորին մէջ պէտք եղածին պէս չկըրցանք գնահատել ողբերգութիւնը հայ ազգի՝ որուն մարտիրոսութեան առաջ կը նսեմանան թէ Բելգիայի հոգեվարքը և թէ Լեհաստանի աւերումը: Միայն այժմ կը հասնին մեզ վաւերական մանրամասնութիւններ կազմակերպուած և կանոնաւոր կոտորածներու մասին, որոնց ենթարկուած են հին և դժբաղդ հայ ազգի միացորդները: Այսօր 1895 թուի յիշատակները կը վերապրին՝ աւելի նսեմանալու համար: Հայաստանի զաւակները, որոնք կարող էին պաշտպանել իրենց ընտանիքը, տարուած են զինուոր, տարագրելու պատրուակով կանայք և երախաները կը հեռացուին իրենց հայրենիքէն, ենթարկուելով աքսորի, բանտի, կոտորածի և թիւրքական սանձարձակ անբարոյականութեան: Բնազդական այն զզուանքը, որ այսպիսի դէպքեր կառաջացնեն մեր մէջ, ևս առաւել կը սաստկանայ, երբ կը զգանք, որ մենք՝ անգլիացիներս ազգովին եղած ենք երաշխաւոր օսմանեան պետութեան նահանգներու բարենորոգման և այդ իսկ պատճառաւ այժմ աւելի զօրեղ պիտի լինի մեր որոշումը, որ վերջնական յարդարումի ժամանակ Հայաստանի ազատագրութիւնը ամեն կասկածէ և վէճէ դուրս պէտք է լինի:

Թող հիմակուընէ հասկնայ Բ. Դուռը իր գերմանացի դրդիչներով և քիւրդ դահիճներով, որ այսօրուայ թափուած հայու արիւնի համար լիակատար հաշիւ պիտի պահանջուի իրենցմէ, և այդ օրը ոչ հեռու է և ոչ ալ անորոշ:

Միևնոյն ժամանակ հայերը դիւցազնական ճիգեր կընեն իրենց ազատութիւնը ձեռք բերելու համար: Վանում վանեցին թիւրք բանակը և պաշտպանեցին քաղաքը բոլոր յարձակումներու դէմ, մինչև որ ռուս բանակը եկաւ ազատեց: Իրենց ազատութեան օրը զիրենք արժանի պիտի գտնէ այն ազատութեան, որ կը պահանջեն:

Թարգմ. Տ. Գ.

ՄԻ ԷՋ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

III

Պետութիւնների միջև եղած մրցումը կրօնական խնդիրների շուրջը այնպիսի մեծ չափերի էր հասել, որ Ղրիմի պատերազմի պատճառը պաշտօնական պատմաբանները համարում են կաթոլիկների և ուղղափառ-

Սակայն խնդրի փաստացի կողմը բոլորովին այլ է ասում:

Ֆրանսիան տեսնում էր, որ ուղղափառ դաւանութեան քրիստոնեաների հարցը պաշտպանելով՝ Ռուսաստանը ուժեղացնում էր իր ազդեցութիւնը. ուստի նա դիմեց Բ. Դրան, որպէսզի կաթոլիկ քրիստոնեաների պաշտպանութեան պաշտօնական ներկայացուցիչ ճանաչվի Թիւրքիայում Ֆրանսիան և ճանաչվեն կաթոլիկ քրիստոնեաների իրաւունքները՝ որպէս կրօնական համայնքի: Ռուսաստանը նոյնպէս հարց էր դրել վերականգնել Թիւրքիայի սլաւոնների այն իրաւունքները, որոնք հաստատվել էին Թանզիմատով. Անգլիան ևս հարց էր դրել դեռ 1845 թւից՝ ճանաչել բողոքական համայնքների իրաւունքը:

Երկու պետութիւնները Աւստրիայի հետ

---

*) Ըստ այդ պատմաբանների, Երուսաղէմի կաթոլիկ վարդապետներից մէկը գողացել էր ուղղափառների սեղանից մի մասնատուփ, որի շուրջը սարքվեց ֆրանսիական դիպլոմատիայի հակամարտութիւնը, որը վերջացաւ նրանով, որ վէճը վերածվեց արևելեան պատերազմին (Ղրիմի):

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁՅՈՒՍԱՀԱՏԻՆՔ

Թէ այս պատերազմը, մեր դատին լուծումը բերելէ առաջ, մեծ փորձանքներ պիտի բերէր մեր ազգին գլխուն, ատիկա անհնար էր չնախատեսել: Բայց փորձանքները նախատեսուածէն շատ աւելի մեծ, շատ աւելի ահաւոր են, ամեն չափ ու սահման կը գլեն, ամեն երեւակայութենէ անդին կանցնին: Իւրաքանչիւր լուր, որ կը հասնի այս վերջերս մեր տարաբաղդ հայրենիքէն, մղձաւանջներու ամենէն զարհուրելին կը պատկերացնէ մեր աչքին: Կարծես մօտեցած ըլլալուն համար իր երկարատեւ մարտիրոսութեան վերջնական վճռական վախճանին, հայ բազմաչարչար ազգը՝ դարերու ընթացքին իր կրած բոլոր չարչարանքները ամենը մէկանց՝ կուտակուած, խտացած, համադրուած, ու նորանոր անտիպ այլանդակ սոսկումներու ալ յաւելումով՝ կը բռնադատուի կրել վերստին:

Թիւրքահայ մտաւորականութեան ամենէն թանկագին դէմքերը (ձեռքս յառաջ իսկ չերթար՝ անոնց սիրելի անունները արձանագրել հոս...)՝ անբան խուժաններու մոլեգին քմահաճոյքին մատնուած... մէկ մասը՝ կախաղանի վրայ կամ բանտերու խոր տանջանքներու մէջ, ոմանք, անհետացած... ուրիշներ՝ դաժան աքսորի մը անստոյգ արհաւիրքին մէջ թաղուած... ինչ կըլլան հիմա, ինչ են եղած, ինչ պիտի ըլլան վաղը... պիտի հասնին տեսնելու Այգը, զոր ամենէս աւելի՝ իրենք, որ կը չարչարուին, արժանի են տեսնելու...

Հազարաւո՜ր, հազարաւո՜ր մեր եղբայրները՝ հալածուած, անարգուած, թալանուած, կոտորուած, կամ չուառական հօտերու պէս դէպի անապատները ու ճահճախուտները քշուած...

Մեր քոյրերը—ո՜վ ամենէն դժբաղդ արարածները աշխարհիս—գազիր անասուններու թաթերուն մէջ փետրտուած, լլկուած...

Մեր գիւղերը աւերակուած, ամայացած, կամ՝ ինչ որ աւելի գէշն է՝ թիւրքացած... հինաւուրց վանքեր, անգին յիշատակարաններ, մեծարժէք ձեռագիրներ, արուեստի չքնաղ առարկաներ, մեր նախնեաց մտքին ու հոգիին սուրբ աւանդները, բարբարոսներու սուրին ու հուրին տակ փճացած...

Անտանելի՜ է՝ հոս, հեռուէն, հետևիլ այդ հրէշութիւններուն և բան մը չկարենալ ընել՝ զանոնք կատարող ճիւաղներուն դէմ մաքառելու համար... Անտանելի՜ է, ամօթալի՜ է հոս՝ այդ դժոխքին մէջ՝ չըլլալ այս պահուս, գէթ մեր եղբայրներու հետ չարչարուելու համար...

Այո, հոս ալ գործ կայ կատարելու:

Բայց ի՜նչքան ողորմելի կը թուի՝ այսպիսի րոպէի մը՝ սա մեր թուղթի ու խօսքի գործունէութիւնը, բաղդատմամբ այն վսեմ գործին, զոր դահիճներուն դէմ կուրծք կուրծքի կռուող մեր կամաւորները կը կատարեն, կամ բաղդատմամբ նոյն իսկ այն նուիրական տառապանքին, զոր հայրենի հողին վրայ ազգային դարաւոր օջախը պահպանելու յամառած և ատոր համար այս տարապայման աղէտներուն մատնուած մեր եղբայրներն ու քոյրերը կը կրեն:

Կովկասեան բանակին յառաջխաղացումը գոնէ սփոփանք մը, կազդոյր մը, սրտապնդում մըն էր՝ մեր ցաւին ու զարհուրանքին մէջ. . . . .

Տէր Աստուած, արշալոյսը պիտի ծագի, ու անտարակուսելի կերպով, բայց քանի՜ հայ մնաց մեր խեղճ հայրենիքին մէջ՝ զայն ողջունելու, անով հրճուելու համար...

* *

Թող այս տողերը յուսահատութեան աղաղակ մը չկարծուին: Ոճիր պիտի ըլլար հայու մը համար՝ յուսահատիլ, երբ դարերէ ի վեր մշտամրրիկ ծովու մը վրայ ալեկոծ թափառող մեր ազգութեան նաւը այնքան մօտ է նաւահանգիստին: Ասոնք գերասաստ կսկիծի մը ճիչն են միայն: Ու կարելի՞ է չզգալ այդ կսկիծը, ամբողջ հոգւով անկից այրելու աստիճան չզգալ զայն...

Տանելի՞ն, կարելի՞ն, ըմբռնելի՞ն սահմանն անցաւ մեր եղբայրներուն քաշածը... Քարերը պիտի արտասուէին՝ տեսնելով այնքան թշուառութիւն...:

Պէտք չէ, սակայն, պէտք չէ յուսահատիլ: Ինչքան ալ անհանդուրժելի ըլլան մեր հոգեկան տառապանքները, անոնք պէտք չէ որ մեր մէջ խեղդեն հաւատքը: Յուսահատիլ՝ մեր դահիճներուն մեղսակցիլ պիտի ըլլար: Անօրինակ ահագնութիւնն իսկ մեր հայրենիքին վրայ խուժող և հետզհետէ սաստկացող աղէտին՝ պատճառ մը աւելի պիտի ըլլայ, որպէսզի մեր թշնամիին ոճրագործ «հաշիւն» ի դերև ելլէ և մեր յոյսն աւելի ապահովապէս իրականանայ: Անհնար է, որ Ռուսիոյ, Ֆրանսայի, Անգլիոյ պէս մեծանձն ազգեր մարդասպան թիւրքին եղեռնը «նուիրագործեն»: Անհնար է, որ թիւր հարց հանեն, մեծամասնութեան ու փոքրամասնութեան խնդիր յարուցանեն: Արևմտեան կոտորածները, որ պիտի մնան Թիւրքիոյ հայութենէն, անոնք, անոնք պիտի ըլլան տէրը Հայաստանին, անոնք պիտի վերակազմեն հայ ազգը, որ անջնջելի է: Նախատեսելով զուլումը, որուն այս պատերազմին հետևանքով՝ Թիւրքիոյ հայութիւնը պիտի ենթարկուէր—թէպէտ և այս աստիճանը չէր երևակայեր*)—ես այդ մասին՝ ամիսներ առաջ՝ ռուսական խիղճին կոչ ըրի պ. Միլիւկովին ուղղած նամակիս մէջ. և պ. Միլիւկով՝ համակրական տողերով հրատարակելով այդ նամակը՝ իր համախոհութիւնը ցոյց տուաւ այդ մասին: Լոնդոն գտնուած միջոցիս, բոլոր անգլիացի անձնաւորութեանց, որոնց հետ առիթ ունեցայ տեսակցիլ, նոյն բանն ըսի, և ամենքը համաձայն գտնուեցան: Ֆրանսայի մէջ՝ նոյնպէս. միևնոյն կոչին, զոր ուղղեցի ֆրանսական հասարակութեան՝ Ֆուայէի բանախօսութեանս մէջ, պ. Դումէր, որ կը նախագահէր, հետևեալ ազնիւ պատասխանը տուաւ. «Մեր յաղթանակի օրը, մենք միայն ողջ մնացողները չպիտի հաշուենք, պիտի հաշուենք նաև մեռեալները, պիտի հաշուենք թէ իբր հերոս և թէ իբր մարտիրոս ինկողները, որ ամենք ալ նոյն դատին համար զոհուեցան և անոր յաղթանակին նպաստեցին»: Եթէ յաղթանակի օրը այս սկզբունքը չյարգուի ազատական մեծ ազգերուն կողմէն, ոչ ազատութեան, ոչ արդարութեան, ոչ քաղաքակրթութեան կարելի է հաւատալ այլ ևս: Այդպիսի վատութիւն մը անհնարին է: Մենք վստահութիւն ունինք մեր պաշտպաններուն վրայ, մենք հաւատք ունինք մարդկային ազնուութեան: Մեր հայրենիքին վրայ տեղացող արեան անձրևը գթութեան և յարգանքի այնպիսի միահամուռ ու խորին շարժում մը կը յառաջացնէ այս պահուս ազատական Եւրոպայի մէջ՝ ինչպիսին դեռ չէր տեսնուած. Դումային բեմէն պ. Սազոնով ռուս կառավարութեան մեծարանքը յայտնեց հայութեան՝ հալածանքներու ահարկու փոթորիկին մէջ անոր ցոյց տուած հոգեկան արութիւնը փառաբանելով: Լորդ Բրայս, որուն հաղորդած էի Թիւրքիոյ հայոց եղերական կացութեան վրայ մանրամասն տեղեկութիւններ, ինծի կը գրէ, թէ փութացած է լորդերու ժողովին մէջ կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել այդ մասին. իրմէ յետոյ խօսք առած են նաև լորդ Քրօմըր և Քէնթըրբըրիի արքեպիսկոպոսը. լորդ Քրիւ պատասխանած է կառավարութեան կողմէ. ամենքն ալ շեշտած են այն սկզբունքը, թէ այս բոլոր տառապանքները կը զօրացնեն հայ ազգի իրաւունքներն ու եռեակ համաձայնութեան պարտքը կը շեշտեն անոր դատին արդար ու վերջնական լուծում տալու. Լոնդոնի մեծագոյն թերթերը արձանագրած են անգլիական ազգի և կառավարութեան այս ջերմ ցաւակցութեան և համակրութեան ցոյցը: Ֆրանսայի արտաքին գործոց մինիստրութեան կարևոր պաշտօնեաներէն մին, որուն նոյնպէս ուղղած էի տեղեկագիր մը՝ խնդրելով որ հաճի զայն մինիստրին ներկայացնել, հետևեալ պատասխանը կուտայ. «Փութացի հաղորդել ձեր յունիս 24-ի շահեկան նամակը: Ապահով եղէք, որ հայոց տառապանքները մեր սրտին մէջ խորապէս արձագանգ կը գտնեն, և թէ մենք հաստատապէս կուզենք, որ հայերը մասնակից ըլլան ստացուելիք հատուցմանց՝ երբ գիշատիչ պետութեանց զօմիասին համոզում էին սուլթանին, որ Ռուսաստանի պահանջը ուղղափառ եկեղեցու և Երուսաղէմի սրբատեղիների մասին բոլորովին կրօնական հարց չէ, այլ դրանով Ռուսաստանն ուզում է 12 միլիօն սլաւօններին ի մի ձուլել, որպէսզի հեշտութեամբ կարողանայ կարգադրութիւններ անել Թիւրքական կայսրութեան մէջ. այսպիսով Ռուսաստանի պահանջին ոչ մի բաւարարութիւն չը տուեց Թիւրքիան, և 1853 թւին պայթեց Ղրիմի պատերազմը: Սակայն Ռուսաստանի պահանջը մերժելուց յետոյ, Անգլիայի և Ֆրանսիայի խորհրդով, սլաւօն քրիստոնեաների համակրութիւնը վայելելու նպատակով, սուլթանը մի նոր ֆէրմանով վերականգնեց Թիւրքիայի քրիստոնեայ հպատակների այն բոլոր իրաւունքները այդ նոյն 1853 թւին, որոնք յայտարարվել էին Թանզիմաթով և որոնք չէին գործադրվում մինչև այդ ժամանակ: Զարմանալին այն է այստեղ, որ Ռուսաստանի այդ նոյն պահանջների համար կռւով դիմադրում էին երկու մեծ պետութիւնները և միաժամանակ ազդում սուլթանի վրա՝ մերժելու Ռուսաստանի պահանջները, առիթ առեղծելով զինված ընդհարման համար:

---

*) Ու երբէք այս աստիճանին չէր հասներ, եթէ Պոլիսը շուտով գրաւուած ըլլար:

Իսկ այն վերաբերմունքը, որ ցոյց տուին դէպի Թիւրքիայի ճնշված ժողովուրդները Եւրոպայի մեծ պետութիւնները 1853 թ. պատերազմին, մի անգամ ընդ միշտ վկայում է, թէ ինչպիսի խաղաքարոյ խիղճ ունի դիպլօմատիան և ինչպէս այդ խիղճը միշտ էլ խլանում է այն դէպքում, երբ ճնշվածի դրութեան փոփոխութիւնը չէ համապատասխանում դիպլօմատիայի շահերին: Այդ ժամանակ, երբ բալկանեան սլաւօնները 1853 թ. պատերազմին փորձեր էին անում թօթափելու իրանցից Թիւրք բռնակալների լուծը, Ֆրանսիան ու Անգլիան Աւստրիային յանձնարարեցին զսպելու բալկանեան ժողովուրդներին՝ սուլթանին դէմ չապստամբելու համար. Աւստրիան 25,000 զօրքով կարողացաւ զսպել Բօսնիա-Հէրցեգովինան և Սերբիան. իսկ երբ այդ պահին յոյները շարժվեցին դէպի Կ. Պօլիս պատերազմ յայտարարելով սուլթանին, անգլիական ու ֆրանսիական միացեալ նաւատորմիղը ստիպեց նրանց դադարեցնելու իրանց գործողութիւնները, իսկ մակեդոնացիներին լռել և ոչ մի տրտունջ չը յայտնել:

Նման փաստեր բազմաթիւ են, որոնք անխղճութեան սահմանին շատ են մօտենում: Նոյն երբ Թիւրքական զօրքը խուժ տուեց կղզու բնակիչներին դէպի յունական ափը, մատնելով ամենասոսկալի տառապանքների, ափում կանգնած ֆրանսիական ու անգլիական նաւատորմիղը հրաժարվեց տեղափոխել ժողովրդին միւս ափը, որով պիտի փրկէր հազարաւոր սովալլուկ ու թշուառ կանդիացիներին: Եւ այդ անում էր դիպլօմատիան տրամաբանօրէն. ոչ Անգլիան և ոչ Ֆրանսիան չէին ուզում կանդիացիների ազատութիւնը. ինչպէս այդ ժամանակվան ֆրանսիական մամուլն էր արտայայտվում՝ «կանդիացիների մտադրութիւնը ազատվելու համար Թիւրքական իշխանութիւնից՝ վերին աստիճանի վնասակար միտք է և քաղաքական անհրաժեշտութեան ոչ մի հիմք չունի»: Աւելի խիստ վերաբերմունք դիպլօմատիայի կողմից՝ տեսել է Թիւրքահայ ազատագրութեան պատմութիւնը. այն ժամանակ, երբ 1894—6 թւականներին կոտորում էին հայերին, հիւպատոսները փակում էին իրանց դռները Թիւրքի ու քիւրդի սրից ազատված հայի առաջ, ...

. . . .

Բիսմարկը ամբողջ արևելեան խնդիրը չէր փոխում իր պօմերանեան մի զինուորի ոսկորների հետ. Անգլիան Բերլինի վեհաժողովի ժամանակ կնքելով Թիւրքիայի հետ Կիպրոսի գաղտնի դաշնագրութիւնը (որի հիման վրա նա ստանում էր Կիպրոսը), պաշտպանում էր Թիւրքիային արտաքին միջամտութիւնների դէմ, որով հայկական հարցը խափանեց, ժամանակ տալով Թիւրք կառավարութեանը՝ սիստեմատիկօրէն ջարդելու հայ տարրը Թիւրքիայում: Փոքրիկ ազգերի պատմական ճակատագիրը, տեսնում ենք, սերտ կապ ունի մեծ ազգերի քաղաքականութեան հետ, և քաղաքագէտների ամէն մի համարձակ քայլ, որ նոր հօրիզոններ է բաց անում սեփական ազգի համար, տրագիկ նշանակութիւն ու հետևանքներ է ունենում փոքրիկ ազգերի համար: Այսօր այդ նոյն տրագիկ վիճակի մէջ է Թիւրքահայը:

Ալ. Մել.-Ադամ.

Մոսկվա

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Դվինսկից դէպի հիւսիս-արևմուտք հակառակորդը զարգացրեց ուժեղ թնդանօթային կրակ Իլլուկստ-Ելովկա խճուղու շրջանում:

Դվինսկից դէպի հարաւ-արևմուտք թշնամին ապարդիւն տեղը յարձակում գործեց Օվիշէ և Վէյկունցէ լճերի միջև և Դվինսկի խճուղու և Սամավայի միջև: Դավգէլիշկից և Կօչերժիշէկից մենք գերմանացիներին քշեցինք:

Վիլիայի գետանցքների վրա՝ Վարշավայի երկաթուղուց դէպի արևելք ընկած շրջանում մենք վանեցինք թշնամուն կրակով: Մասնակի բնոյթի տաք ընդհարումներ տեղի էին ունենում Սկիդլէից դէպի արևելք գտնվող Ժիգունա գիւղի շրջանում:

Նէմանի վերին հոսանքի շրջանում հակառակորդը յաճախակի յարձակման էր դիմում: Մօստա աւանից դէպի [illegible] մեր պահակազօրին Եհնա գետի այս կողմը: Միևնոյն գիւղից դէպի արևելք գերմանացիների յամառ յարձակումները վանվեցին:

Կարտուզսկայա Բերէզա-Սենեավկա խճուղու վրա հակառակորդի առաջապահ գնդերը հասան Շարա գետին:

Եասէլդայի և Պինայի միջև սկսվում են կռիւներ Մոտոլ գիւղի, Նովօլուչկի և Պոտապովիչի մօտ:

Կովէլից դէպի արևելք՝ Ստոխօդա գետի մօտ, յամառ դիմադրութիւնից յետոյ Գուլէվիչի և Բուդկա Սիտովիսկայա գիւղերը վերցնելուց յետոյ, մենք գերեցինք 2 օֆիցէր և 74 զինուոր, ձեռք ձգեցինք 4 գնդացիր: Հակառակորդը, ետ մղվելով Պրիպեատից դէպի հարաւ, տեղ-տեղ խոշոր ոյժերով հակայարձակումներ է գործում և յամառ դիմադրութիւն ցոյց տալիս: Կորաբլիշչէ և Պօգօրէլցի գիւղերի մօտ հակառակորդի դիրքը ձեռք ձգելիս մենք վերցրինք մի թնդանօթ, 7 գնդացիր, 57 օֆիցէր և 2593 զինուոր: Յետոյ թշնամու հակայարձակումից մեր զօրքերը ետ քաշվեցին:

Գլադկէ-Վօրօբիէվկա շրջանում տեղի ունեցած կռւի մէջ՝ Տարնոպոլից դէպի հիւսիս-արևմուտք, մենք գերեցինք 5 օֆիցէր, 547 զինուոր և ձեռք ձգեցինք 2 գնդացիր: Վօրօբիէվկա գիւղը և նրա մօտի անտառը ձեռքից ձեռք են անցնում:

Ստրիպա գետի մօտ՝ Տարնոպոլից դէպի հարաւ-արևմուտք, մեր զօրքերը խիզախ յարձակումով ձեռք ձգեցին Բէնեավա գիւղը: հակառակորդը փախաւ գետից յանկոյս, կրելով խոշոր կորուստներ:

Կատաղի կռիւ սկսվեց Տրէմբօվլից դէպի արևելք, Բուրկանովի անտառի շրջանում և Ջլօտնիկա գիւղի մօտ: Երեկոյեան դէմ մեր զօրքերը ճեղքեցին խումբերը, սուիններով քշեցին հակառակորդին խրամատների միջից, ձեռք ձգեցին անտառը և գիւղը և հակառակորդի ուսերի վրայով անցան Ստրիպա գետի այն կողմը: Այստեղ մենք վերցրինք աւելի քան 1500 գերի:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում՝ Նէվիլ և Բէտանկուր շրջաններում տեղի էին ունենում կռիւներ ձեռքի ռումբերի օգնութեամբ, նաև թնդանօթների մասնակցութեամբ: Լէգօն շրջանում տեղի էին ունենում կռիւներ ձեռքի ռումբերով: Շալօնի բանակից դէպի հիւսիս շարունակվում էր թնդանօթային կռիւ. Արգօնների արևմտեան մասում ականային կռիւ է:

ԼՕՆԴՕՆ.—Զինուորական մինիստրի օգնականը յայտնեց պալատում, որ անգլիական զօրքերի կորուստները առ 8-ն օգոստոսի կազմում են 381,983 մարդ, որոնցից սպանված՝ 4965 օֆիցէր և 70,922 զինուոր, վիրաւորված՝ 9973 օֆիցէր և 241,086 զինուոր, անհետ կորած՝ 1501 օֆիցէր և 53,466 զինուոր:

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 սեպտեմբերի

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Սեպտեմբերի 1-ին մեր հետևակները յարձակվեցին և ցիրուցան արին թշնամու զօրամասերին Զիմէգօ շրջակայքում և Վանօի հովտում: Կօրդէվօլէի վերին մասում թշնամին, դնելով մեծ թւով լայնաբերան թնդանօթներ, կրակ բացեց մեր զօրաճակատի դէմ: Լրացուցիչ տեղեկութիւնները յայտնում են մեր զօրքերի քաջագործութիւնների մասին Պլէցցօ աւազանում: Կարսօում լոյս օգ. 30-ի գիշերը թշնամին մեր զօրացի դէմ նետեց մեծ թւով ռումբ սաստիկ պայթուցիկ նիւթերով, բայց մեր թնդանօթները շուտով կանգնեցրին այդ ռմբաձգութիւնը:

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 սեպտեմբերի

ՀՌՈՄ.—Ծովային գլխաւոր շտաբի կառավարիչը յայտնում է, որ ֆրանսիական մի սուզանաւ, հանդիպելով օգոստոսի 27-ին Ադրիատիկ ծովի միջին մասում, Պլանկա հրուանդանից ոչ հեռու, աւստրիական ականանաւերի, լուրջ վնասներ պատճառեց նրանցից մէկին:

ՓԱՐԻԶ.—Ծովային մինիստրութիւնը հաղորդում է, որ նախազգուշական միջոցներ են ձեռք առնված գերմանական սուզմանաւերի գործողութիւնների դէմ Լուարի և Ժիրոնդի ակօնքների մօտ:

ԽՐԻՍՏԻԱՆԶՈՒՆԴ. — Գերմանական մի սուզմանաւ բռնեց նորվէգիական «Հանզէն» շոգենաւին, որ փայտ էր տանում Անգլիա, և տարաւ նրան Գերմանիա: Միևնոյն սուզմանաւը այրեց նորվէգական «Վինօվէկ» նաւը, որ բեռնված էր խցաններով:

Նորվէգիական «Նօրտէ» նաւը Լոնդոն գնալիս պայթել է գերմանական սուզանաւից. նաւաստիներին ազատել է շվէդական մի շոգենաւ:

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

2 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.—Հաստատվեց զինուորական մինիստրի նոր օգնականի պաշտօն, որ հոգալու է զինուորական օդագնացութեան մասը:

Պուանկարէն այցելեց ազգային ինքնապաշտպանութեան համար ռազմամթերք պատրաստող գործարանները Լիոնի և Սէնէտիէնի շրջաններում. յետոյ նախագահը եկաւ Բէլֆօր և յանձնեց դրօշակներ մարօկկեան դիվիզիայի նոր կազմակերպված գնդերին, որը յետոյ անցնելով Էլզասի զօրաճակատի մօտով, վերադարձաւ Փարիզ:

Պետ. Հեռ. Գործ. Թղթակիցը այցելեց այն գործարանները, որոնք ռազմամթերք են պատրաստում Ռուսաստանի համար: Նկատվում է, որ արտադրութիւնը հետզհետէ աւելանում է:

ԻՒՐԻԷՎ.—Վճռված է Րիգայի պօլիտեխնիկումը փոխադրել Մոսկվա:

ԼՕՆԴՕՆ.— Անգլիական սօցիալիստների կենտրօնական խմբակը օգոստոսի 31-ին կայացած միտինգում բանաձև ընդունեց, որով իրան համերաշխ չէ յայտարարում յօգուտ Գերմանիայի տարածված այն դաւերին, որոնց նպատակն է պաշտպանել հաշտութեան վաղաժամ առաջարկութիւնները:

ՍՕԼՈՒՆ.—Բոլոր ընդդիմադիր կուսակցութիւնները, գտնելով ներկայ դրութիւնը չափազանց վտանգաւոր հետևանքներով լի, վճռեցին ունկնդրութիւն խնդրել Ֆերդինանդ արքայից:

ՏՕԿԻՕ.—Զինուորական մինիստրութիւնը վճռեց կարգաւորել 1,200 գործարան 100 հազար բանւորով՝ ռուսական զինուորական պատուէրները աջողութեամբ կատարելու համար:

ՍՕԼՈՒՆ.—Եկաւ և մեկնեց ֆինանսների մինիստր Բարկը:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բերլինից հաղորդում են, որ դաշնակից խորհուրդը կարգադրութիւն է հրատարակել, որի ոյժով Գերմանիա մտցվող բոլոր հացահատիկն ու կերը պէտք է ներկայացվեն կենտրօնական բիւրօյին կանցլէրի սահմանած պայմաններով: Այդպիսով Գերմանիա մտնող հացը ընկնում է պետութեան ձեռքը: Հացի առևտուրը կանգ է առել:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Բուդապեշտում պայթեցնում են վառօդի խանութները:

◆ Ռումինական սահմանագլխում աւստրո-գերմանական զօրքերը սպառնալի դիրք են բռնել: Նրանց ցոյցական տեղափոխութիւնները շարունակվում են:

◆ Մինսկում վագօններում տեղերը կռւով են ձեռք ձգում: Կայարաններում թափված են մեծ քանակութեամբ տնային իրեղէններ: Կինեմատօգրաֆները ժամանակաւորապէս գրաւված են զինուորական պէտքերի համար:

◆ Ինչպէս հեռագրում են Մօսկվայի լրագիրներին, Կիէվում սարսափի օրերում կօշմար էր տիրում. շատերը անմտկացան: Դաշնամուրները վաճառվում էին 15 ռուբլով, բազկաթոռները՝ հատը 1 ռուբլով: Պետրօգրադում պաշտօնական շրջաններից ուղարկվեցին հանգստացնող հաւաստիացումներ, որից յետոյ սարսափը մեղմացաւ: Շաքարի գործարանները ներկայումս աշխատանքները վերսկսել են: Վտանգը կարելի է անցած համարել:

◆ «Р. У.»-ին հեռագրում են, որ Գերմանիան վերջնագրի ձևով պահանջել է Ռումինիայից թոյլ տալ իր զօրքերին, որպէսզի նրանք յարձակվեն Բեսսարաբիայի վրա և ներս մտնեն ծովը:

◆ Ամերիկացի ֆինանսիստները 100 միլիօն ֆունտ ստերլինգ են տալիս դաշնակիցներին:

◆ Աւստրիական դեսպան Դումբան մեկնում է Ամերիկայից:

◆ Միացեալ Պետութիւնների նախագահ Վիլսոնը պահանջել է ետ կանչել գերմանական դեսպան Բէրնսդորֆին:

◆ Կօպէնհագէնից հեռագրում են, որ Գերմանիայի շատ տեղերում բռնկվել է խոլերա:

◆ «Н. В.»-ն ընդգծում է, որ վերջին օրերում արևելեան ռազմաբեմի վրա միայն 40,000 գերի վերցնելը ցոյց է տալիս, որ գերմանացիների աջ զօրաթևն հասցրած է լուրջ հարուած, որպիսի հանգամանքը անշուշտ կանդրադառնայ գերմանական գլխաւոր զօրաճակատի վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՑՈՒՑԱԿ

—

Սուրաբայայի (Ջաւա կղզի) նուիրատուների

(Յօգուտ Հայ Նպաստ. Ընկ.)

(Տես «Մշակ» № 167)

Պ. Պօղոսեան 100 ֆլ., Մ. Եղիայեան 35 ֆլ., տիկ. Բալ. Մ. Եղիայեան 30 ֆլ., Սամ. Յովակիմ 25 ֆլ., Մելքում Յ. Վարդանեան 20 ֆլ., Եկ. Յարդանեան 12 ֆլ., Յովհ. Գալստեան, Ե. Մ. Եղիայեան և Ա. Կարապետ 10-ական ֆլ., ոմն, N. N., J. Court, Ս. Յ. Տէր-Մարտիրոսեան, Լևոն Տէր-Սարգիս, Ռ. Յովհաննիսեան, Գ., ոմն 5-ական ֆլ., ոմն, N. N. V. Rendorp և ոմն 2.50-ական ֆլ., ոմն և ոմն 2-ական ֆլ.: Ընդամենը 306 ֆլ. կամ 25.1.8 անգլ. ոսկի:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Մեզ հաղորդում են հետևեալ սարսափ տեղեկութիւնները Աղբակ և Սալմաստ ապաստանած փախստականների մասին.

Վանի առաջին նահանջի և փախուստի ժամանակ 8000 հոգի փախել էին դէպի Սալմաստ երկու գծով—Բերկրի-Կալէի գծով, միւսը Խօշապի գծով: Առաջին գծով եկողների թիւը հասնում էր մօտ 3000-ի, որոնք անցել էին Սարայի վրայով Ղօթուր, ուր նրանց վրա յարձակվել էին միլանցի

հեր»: Իսկ Ֆրանսայի կիսապաշտօնական թերթը՝ «Թան»՝ քանի մը օր առաջ Չէյթունի նուիրուած յօդուածիկ մը հրատարակելէ յետոյ՝ ուր հերոսական քաղաքին փառաւոր անցեալը ոգելով, անոր դաւադրութեան մը զոհ երթալով կործանումը կողբար, երէկ կը հրատարակէր ընդարձակ խմբագրական մը, ուր թուելով Թիւրքիոյ բնաջինջ ընել ձգտող Թիւրք-գերման ծրագրին գործադրութեան քստմնելի մանրամասնութիւնները՝ սա մեծապէս նշանակալից և սրտապնդիչ տողերով կեզրակացնէր:

«...Այս տառապանքները տիտղոս մը եւս կը կազմեն ապրելու իրաւունքին, զոր հայերը արիաբար պաշտպանած են ցարդ՝ 6-դարեան բռնապետութեան մը դէմ իրենց ցեղին ու քաղաքակրթութեան դիմադրութեամբը: Հայաստանի ինքնավարութիւնը այլևս անհրաժեշտ պահանջ մը կը դառնայ, այս երկարատև մարտիրոսութեան իսկ պատճառով: Այժմ այլևս խնդիրը անմեղ զոհերու նկատմամբ կարեկցութիւն ու գթութիւն զգալու մէջ չի կայանար միայն: Հայաստանը, որ ինքն ալ կը կռուի մարդկութեան ու ազատութեան համար՝ Կովկասի մէջ մեր դաշնակիցներուն թանկագին աջակցութիւն մը բերելով, Հայաստանը, որ մինչև հիմա արդէն շատ իսկ զանցառութեան մատնուեցաւ, արժանի է որ իր դատին արդարութիւնը լիովին նկատի առնուի: Անիկա՝ հաշուեյարդարութեան օրը՝ չպիտի մոռցուի»:

Պէտք է ուրեմն չյուսահատիլ: Անհուն ցաւը, զոր կը զգանք, պէտք է անհունօրէն բազմապատկէ մեր կորովը՝ կռիւը շարունակելու, ու վրէժ, վրէժ, վրէժ լուծելու, պէտք է հազար միջոց խորհինք, հնարենք, կարգադրենք՝ քանդուածները քանդելու:

Հայ ժողովուրդը պատմական այս մեծ րոպէին արժանի հոգեկան մեծութիւն ցոյց տուաւ լիովին. հայ երիտասարդութեան երևան բերած զինւորական ոգին, հայ միջակ և աղքատ դասակարգերու խանդավառ զոհաբերութիւնը այնքան սրտաշարժ ու գեղեցիկ եղան, այնպիսի բարձրութեան մը հասան, որ մեր ազգը այսօր աշխարհիս ամենէն վսեմ ազգերէն մին դարձուցին. միայն մեր ունեւոր դասակարգն է, որ րոպէին համապատասխան վարմունք չունեցաւ դեռ. ընդամէնը մէկ ու կէս միլիօն ռուբլի հաւաքուած է, կըսեն Թիֆլիսի թերթերը, և ատոր ալ կէսէն աւելին միջակ ու աղքատ դասակարգի հայեր տուած են. աշխարհիս ամէն կողմ ցրուած հայ ունեւորներու հարստութիւնը պատկառելի գումար մը կը ներկայացնէ. հարուստները կարող են՝ առանց իսկ նեղուելու՝ այդ հաւաքուածին 8—10 անգամը գոյացնել իրենց նուէրներով, եթէ կամենան, եթէ ըմբռնեն թէ իրենց այդ լուրջ նուիրաբերութեամբ էական ծառայութիւն մը ունին ազգային դատին մատուցանելու: Ես յոյս ունիմ, որ մեր հարուստները պիտի վերջ ի վերջոյ ցոյց տան այդ ցանկալի զոհաբերութեան ոգին. սրտապնդիչ զարթօնքի մը նշանները կը սկսին արդէն երևան գալ արտասահմանի Թիւրքահայ հարուստներուն մէջ. Փարիզէն՝ Տիգրան-խան Քէլեկեան 10,000 ֆրանկ նուիրելէ յետոյ՝ նոյնքան մըն ալ նուիրած էր վերջերս. պ. Էֆնայեան և պ. Մարկոսեան, որ 10,000-ական ֆրանկ նուիրած էին, այժմ որոշած են առաջինը 30,000 և երկրորդը 20,000 եւս հետագային ղրկել կամաւորական գործին համար: Կիմանամ որ Նիւ-Եօրքէն ալ քանի մը հայ հարուստներ բաւական կարևոր գումարներ ղրկած են: Ու մեծ յոյս ունիմ, որ ի մօտոյ աւելի ստուար գումարներ նուիրող ազնիւ ու կարիճ հայ հարուստներ երևան պիտի գան:

Հեռու չէ այն օրը, երբ Թիւրք հրէշը պիտի գլխատուի: Լուրերը՝ Բալկաններէն՝ աւելի յուսալից են: Ռումանիան վճռապէս յարած է քառեակ համաձայնութեան, և այլ ևս թոյլ չի տար, որ Գերմանիայէն ռազմամթերք ղրկուի՝ իր հողէն անցնելով՝ Թիւրքիա: Բուլգարիոյ դիրքը դեռ անորոշ է, բայց զրոյցները կը պատմեն, թէ ան ալ արդէն իսկ գրեթէ վաստկուած է: Մեծաքանակ անգլօ-ֆրանսական զօրք ճամբայ ելած է դէպի Դարդանէլ, ու թերևս վաղը Իտալիան ալ մասնակցի հակաթիւրք պայքարին: Ծիւաղը պիտի շան-սատակ ըլլայ, ապահով է ատիկա: Մենք ատիկա մեր աչքովը պիտի տեսնենք: Տիեզերքի ամեն կողմ ցրուած հայեր, ամենքս ալ ամեն ձևով, ու մեր բոլոր ուժովը՝ մեր ամէն կրցածն ընենք, որպէսզի արդարութեան այդ անմահ ժամը հնչած պահուն, մեր հայրենիքին արիւնաշաղախ աւերակներուն վրայ, մեր նահատակներուն աղէխարշ դիակոյտին վերև, մեր ափ մը հերոսներուն գումարտակը, ստուարացած ու զօրացած, սուրը կռնին, դրօշը ձեռքը, ոտքը հողին վրայ՝ ամուր կենայ, և իր ձեռքն ալ, իր մաքուր արի ձեռքն ալ, գլխատման նուիրական գործը կատարող եւրոպական մեծ ազգերու հզօր ձեռքերուն հետ, վճռական հարուածներէն մէկն իջեցնէ անիծեալ հոգեկէշին զազրելի կառափին:

Ա. Չօպանեան

Փարիզ, 4 օգոստոս

ԱՆԳԼԻԱՑԻ ՋՈՐՋ ԷԴԳԱՐԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ՎԻԼՀԵԼՄ II-ԻՆ

I

Վիլիամ, նկատիր, ես քեզ չեմ տալիս հանուրից ընդունված արքայական տիտղոսը: Դու իմ թագաւորը չես, իսկ եթէ լինէիր, ես կամաչէի խոստովանել այդ: Անգլիացոց վճռով՝ քեզ տրված է անուն, որը ցոյց է տալիս, թէ դու ով ես. բոլոր քաղաքակիրթ աշխարհի աչքում, դու—այդ բառի բուն իմաստով—մարդասպան ես: Արտաքոյ քո սեփական երկրի, Եւրոպայի քաղաքներում այլ ես երբէք չեն տեսնի քո երեսը: Դու էլ չես արժանանայ բնաւ արքայական պատիւների, որովհետև դու հրապարակօրէն խայտառակված ես, և մենք չենք կարող քեզ ընդունել իբրև հիւր: Յիշում եմ քո ոչ վաղեմի այցելութիւնները Լօնդօնին: Դու եկար ինչպէս բարեկամ մեր թագաւորական տան, ինչպէս մերձաւոր ազգական: Դու եկար մեզ մօտ վշտի և ուրախութեան րոպէներին: Ես տեսայ, թէ ինչպէս դու մեր երկու թագաւորի հետ խաղաղութեան համբոյրներ էիր փոխարինում: Ես տեսայ, թէ ինչպէս դու յայտնվեցիր քո ժողովրդի խաղաղասէր ձգտումները տալու Լօնդօնին:

Ես կարդացի այն ճառերը, որ դու արտասանում էիր, գեղեցիկ բառեր և խոստումներ, որոնք թափվում էին քո շրթունքներից: Ես յիշում եմ, թէ ինչ յարգանքներ էր մատուցանում քեզ Լօնդօնը, ինչպէս ողջունում էր քեզ մեր քաղաքը, ինչպէս բրիտանական զինուորները պահպանում էին քեզ մեր մէջ:

Ես յիշում եմ հանդէսներից մէկում ակնկառոյց դիտումդ ինչպէս տապեա: Այն ժամանակ դու յայտնվեցիր իբրև արքայական վշտի մարմնացումն ծանր րօպէին մեր ազգի համար: Եւ բոլոր ժամանակ շուռէշուռ տալով դէպի մեզ համակրական ժպիտով երեսդ և դառնալով դէպի մեզ գեղեցիկ խօսքերով, դու միայն «այդ» էիր փայփայում քո մտքում... Յուդա Իսկարիովտացի, քո համբոյրդ դրոշմված մեր ժողովրդի այտերի վրա՝ պայմանական մատնութեան նշան էր:

II

Ես կը կամենայի իմանալ, թէ արդեօք դու զգում ես, որ համայն աշխարհի ձգտումը մի մեծութիւն է, որից պէտք է ակնածել և որը ուղղված է քո ոչնչացման:

Արդեօք դու հասկանում ես, որ քո ամբողջ օջախը, որի գլուխ կանգնած ես դու, մերժված, ուրացված է ամենքից, և որ այդ օջախին նախանշանակված է՝ ընդհարվելու բոլոր մարդկութեան արհամարհանքին:

Կընկնե՞ս արդեօք պատմութեան մէջ ինչպէս ամենայաղթ ռազմի աստուած, կամ թէ, որ թւում է, ինչպէս գահավիժված միահեծան՝ նախասահմանված ճակատագրից: Հասկանում ես արդեօք, թէ ի՛նչ չափով են չափում քեզ ուրիշ ազգերը, երբ դու Լուվէնը պղծող շներին պարգևներ ես բաշխում, որոնք չը լսված գազանութիւններ են կատարում Դինանում: Լորդ Բրայսի յայտարարութեան հրատարակումից յետոյ, մարդկանց յայտնի եղաւ, որ դու մի թագաւոր ես՝ ռազմիկներից նրանց աւանդութիւնները յափշտակող, որոնց ինքդ երկրպագում էիր, մի թագաւոր՝ սարսափեցնող պատերազմի ասպետական ոգին՝ յաղթահարելով նրան գազանի նախնական յատկութիւններին: Ասում են, որ, «Լուզիտանիայի» խորտակումից յետոյ, դու հրամայեցիր Բերլինում բոլոր զանգերը ղօղանջեցնել, որ քո ժողովրդի մանուկները խնդագին ողջունում են քո և մուկուրցի քիւրդերը։ Այդ եկողները իրանց հետ բերել էին ոչխար մօտ 10,000 գլուխ, տաւար և անասուն բեր, բայց յիշեալ քիւրդերը յարձակվելով՝ ամբողջովին կողոպտել էին։ Սպանվածների և վիրաւորների թիւը 600-ի է հասնում։ Միւս 5000-ը գնացել էր Խոշապի գծով և նրանց տեղաւորվել էին Բարդուղիմէոս-առաքեալի վանքի շրջակայքում։ Սարայի գծով եկածներին օգնութիւն հասցվեց՝ գիւղերում տեղաւորելով և հաց տալով (Ներսէս արքաղանի խումբը), յետոյ բժշկական օգնութիւն (Բագուի Հ. Կոյտ. Միութեան բժիշկը)։ Այստեղ, Աղբակում, նրանց բաժանվեց և հորերի մէջ եղած ցորենը։

Մի քանի օրից յետոյ

անցան նորից զօրքեր. Նրանց գնալուց յետոյ փախստականների մէջ սկսեց տարածվել խոլերան։ Որովհետև Վանի նահանջի ժամանակ Ուրմին և Սալմաստը մեծ խուճապի մէջ էին ընկել և ազգաբնակութիւնը գաղթելով եկել էր Խոյ, Սէյդավար և Պարսից Ջուլֆա, ուստի այդտեղ եւ խոլերան տարածվեց, բայց շնորհիւ ձեռք առնված կարուկ միջոցների՝ համախմբումները ցրվեցին Ջուլֆայից և Սէյդովայից և համաճարակը մասամբ դադարեց։

Զինւորական իշխանութիւնը առաջարկեց փախստականներին տանել Սալմաստ և հեռացնել Խոյից, որովհետև խոլերա տարածողը նա համարում էր փախստականներին։

Նշանակվեց երեք տեղ կարանտին, Ջուլֆայից վերադարձողների համար Նավայի գիւղի մօտ, երկրորդը՝ Աւարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին, կամուրջի մօտ, իսկ երրորդը՝ Մուղանջուղ գիւղում։

Այս փախստականների համար ստեղծվեց սոսկալի դրութիւն. տաք արեգակի տակ, անօթի, նրանք տառապում էին և շատերը մահացան։ Մնացածները եկան Սալմաստ, և նրանց տեղաւորեցին հայ գիւղերում, ուր նրանց բաժանվեց հաց, դրամ։

Օգոստոսի 19-ին Ներսէս եպիսկոպոսը իր խմբով գնաց Բարդուղիմէոսի վանքը՝ այդտեղ եղած փախստականներին եւ օգնելու։ Որոշվեց յետ ուղարկել փախստականներին, թւով 6500 հոգի Վան, համարելով այս քաղաքն արդէն ապահով։

Սակայն օգոստ. 26-ին

այդտեղ գտնված հայերը, որոնք նոր եկած են լինում զանազան տեղերից, ստիպված են լինում նորից փախչել, մի մասը

Դրանով փախստականների դրութիւնը Սալմաստում և Աղբակում աւելի եւս վատթարանում է։ Ներկայումս կան 10,000 փախստականներ (բացի տեղացի աղքատներից), բոլորովին մերկ, անօթի։ Ներսէս եպիսկոպոսը, չունենալով բաւարար միջոց, անկարող է հանդիսանում օգնել այն ձևով, որ կարելի լինի փոքր ի շատէ ամոքել թշուառների ցաւերը։

Մեռնողների թիւը Սալմաստում միայն հասնում է 60—80-ի. մեռնում են գլխաւորապէս դեզինտերիայից, տիֆից, խոլերայից և յոգնածութիւնից։

Անհրաժեշտ է անմիջական և լայն օգնութիւն հասցնել Ներսէս եպիսկոպոսին։ Ծայրայեղ անհրաժեշտ են սննդատու կայաններ հիմնել գէթ հիւանդների համար և տաք շորեր ունենալ։

Դիմում է եղել Ներսէս եպիսկոպոսի կողմից Կարմիր Խաչին, Կովկասեան Գլխաւոր Կոմիտէտին, Նպաստամատոյց Ընկերութեան, Համառուսական Քաղաքային Միութեան և Հայկական Կենտ. Կոմիտէտին, ինչպէս և Էջմիածնի Գլխ. Յանձնաժողովին, բայց դեռ ոչ մի կողմից օգնութիւն չէ հասել։ Միայն Ալ. Խատիսեան խոստացել է այս օրերս ուղարկել 5000 ր., իսկ Կարմիր Խաչը բանալու է Բարդուղիմէոս առաքեալի վանքում սննդական կայան։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը, փախստականներին սնունդ ու բժշկական օգնութիւն ցոյց տալու նպատակով, վճռել է միջնորդութիւն յարուցել մինիստրների խորհրդի առաջ՝ յատկացնելու իրան կէս միլիոն րուբլի այդ գործի համար։ (Հ. Գ.)

Մոսկվայի հայկական կոմիտէտի ժողովում, Էջմիածնից ստացված յուզիչ տեղեկութիւնների պատճառով, որոշվել է դիմել ռուս հասարակութեանը օգնութեան կոչով։

Քաղաքների միութիւնը պրոֆ. Կիչկինի զեկուցագրի համաձայն գտել է, որ հայ փախստականներին (հաշւած 150,000 շունչ) պահելու համար անհրաժեշտ է ամսական 1.125.000 ր.։

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԳՈՐԾԸ

Պատերազմից վնասվածներին օգնող կովկասեան կոմիտէտի 50-դ նիստում արվեցին հետևեալ որոշումները.

1) Լսելով կոմիտէտի կառավարիչ Ա. Ա. Պավլովի և Մեսրոպ եպիսկոպոսի զեկուցումը Իգդիրում, Էջմիածնում և Երևանում կուտակված փախստականների դրութեան մասին, որոնք ոտքով եկել են բաւական մեծ տարածութիւն և առաջիկայում էլ պէտք է երկար ճամբայ անցնեն մինչև Դովլար, Գանձակ, Եւլախ և Լեոքի կայարանները, գտաւ, որ հիւծված հիւանդ ծերերի, կանանց և երեխաների համար այդ անհնար է, ուստի և որոշեց միջնորդել գլխաւոր հրամանատարի առաջ, որ թոյլ տրվի փախստականներին (ծերերին, կանանց և երեխաներին) այդ գաւառները տեղափոխել երկաթուղիներով։

Բացի այդ, Մեսրոպ եպիսկոպոսի յայտարարութեան առիթով, որ մեծ թւով (մօտ 3000) փախստական երեխաներ են կուտվել Էջմիածնում, ուր չը կան շէնքեր ու ապաստարաններ, որոշվեց միջնորդել փոխարքայի առաջ, որ թոյլ տրվի 1000 երեխայ բերել Թիֆլիս, տեղաւորելու նրանց պատրաստված շէնքերում, Կրծանիսում, Մեսրոպ եպիսկոպոսի և հայկ. բարեգ. ընկերութիւնների հսկողութեան ներքոյ։

2) Իր ոյժի մէջ թողնել օգոստ. 3-ի որոշումը՝ Պավլովի տրամադրութեան տակ դնելու 10,000 րուբլի փոխ-հիւպատոսներ Կիրսանովին և Նիկիտինին ուղարկելու փախստականների համար։

3) Պաշտօնական հաղորդագրութեան առիթով, փախստականների շրջանում խոլերա է երևացել. հաղորդել այդ մասին տեղափոխիչ մասի Գերագոյն Պետի ներկայացուցչին և Կարմիր Խաչի գլխաւոր լիազօրին, խնդրելով անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել խոլերայի դէմ կռւելու համար, մատնանշելով որ կովկասեան գլխաւոր կոմիտէտը չունի բժիշկներ։

4) Հաստատել Ա. Ա. Պավլովի կարգադրութիւնը՝ 20 վագոն ալիւր առնելու և Երևանի նահանգապետին ուղարկելու վերաբերմամբ, լիազօրելով Պավլովին դրամը փոխադրել տեղական կոմիտէտներին և ալիւրը ուղարկել։

Իսկ այժմ Երևանի նահանգապետին փոխադրել 50,000 րուբլի։

5) Զինւորական գիւղի բժիշկ Տէր-Պօղոսեանին արված հրամանը չը կատարելու մասին յայտնել փոխարքայի դիւանատանը՝ համապատասխան կարգադրութիւն անելու։

Օգոստոսի 11-ին կոմիտէտի գանձարկղում կար 312,257 ր. 18 կոպէկ։

Փախստականների օգտին Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլայեվնայի կոմիտէտից ստացվել է 905,000 րուբլի, փախստականների օգտին կազմված «Սպիտակծաղկի շաբաթից» և այլ նուիրաբերութիւններից՝ 14,247 ր.։ Փախստականների վրա ծախսվել է 769,399 ր. 19 կոպէկ. մնում է 149,847 ր. 81 կոպէկ։

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՔԱՂ. ԴՈՒՄԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Պետրոգրադի քաղ. դուման օգոստ. 27-ի իր նիստում, ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 18-ի, ընդունեց հետևեալ ռեզոլիւցիան.

«Ծանր փորձութիւնների օրերին, որ ապրում է Ռուսաստանը, Պետրոգրադի քաղ. դուման, տագնապած՝ հայրենիքի բաղդի համար, իր սրբազան պարտքն է համարում հայրենիքի և Թագաւորի առաջ ասել ճշմարտութեան խօսքեր։

«Մեծ պատերազմը, որ վարում ենք մենք Ռուսաստանի շահերի և ժողովուրդների սրբազան իրաւունքների համար, պէտք է հասցնի մեզ արդար գործի յաղթանակին և նոր պայծառ էջ բանայ համաշխարհային պատմութեան մէջ։ Սակայն, մեր հրաշալի բանակի մէջ կայուն հերոսութիւնը և ժողովրդական ոգևորութեան բարձրացումը, որ թև է տալիս մեր մարտիկներին սխրագործութիւնների ժամանակ, առ այժմ չեն կարողացել խորտակել մեր թշնամուն և ապահովել մեր տերիտօրիայի անձեռնմխելիութիւնը. անթիւ զոհերը ի զուր անցան։ Միայն մեր թշնամու ոյժի մէջ չէ թագնված այս անյաջողութիւնների պատճառը, այլ մեր պետական կեանքի հին խոցերի մէջ, իշխանութեան խորապէս քայքայվածութեան և անկարգութեան մէջ, այն մարդկանց յանցաւոր աշխատանքի և յանցաւոր անգործունէութեան մէջ, որոնց և խաղաղութեան տարիներին, և պատերազմի օրերին վստահուած էր յաղթութիւն կազմակերպելու, զինված ոյժերին կազմելու և զօրքի մատակարարութեան սրբազան հոգատարութիւնը։

«Ռուս ժողովրդի ոյժերը անսպառելի են, նրա վճռականութիւնը՝ պատերազմը հասցնել իր վերջնական յաղթանակին՝ անխորտակելի է, նրա հաւատը դէպի զօրքը և առ յաղթութիւնը՝ անսասան։ Բայց ժողովրդական այս ոյժերի համար պէտք է ճամբաներ բանալ, նրանց գլուխ պէտք է դրվի մի իշխանութիւն, որ յանցաւոր չէ անցեալի մեղքերով, որ ուժեղ կը լինի ժողովրդի վստահութեամբ, ընդունակ՝ բարձրանալու պետական գիտակցութեան այն բարձունքին, որպիսին պահանջում է մոմենտի մեծութիւնը։ Իշխանութեան համբերատար աշխատանքը՝ հասարակական ոյժերի հետ՝ պէտք է շուտով և լիակատար չափով ապահովի մեր զօրքին այն միջոցներով, որոնք հարկաւոր են յաղթութեան համար։ Խիստ հատուցումն պէտք է դրվի այն մարդկանց վրա, որոնք շահախնդրական կեղտով և իրանց եղբայրների արիւնով արատաւորեցին իրանց։ Անհրաժեշտ է թեքվել հին ճամբից, որը հասցրեց մեզ ծանր դրութեան, և կանգնել նոր ճամբի վրա՝ դէպի նորոգումն ու յաղթանակը։

«Մեր պատմութեան մէջ այս մեծ և յուզումնալից մօմենտին նոր ճանապարհի ընտրութիւնը, ինչպէս և երկրի բաղդը գտնվում է Միապետի ձեռքում։

«Ժամանակի նշանները, պատերազմի և ներքին կեանքի անցքերը, ժողովրդի յուզալի ընդհանուր տրամադրութիւնը հանդիսանում է ահեղ նախազգուշացում։

«Պետրոգրադի քաղ. դուման, տագնապած՝ հայրենիքի վիճակով, դիմում է Թագաւոր Կայսրին աղերսանքով՝ հրամայել, որպէսզի իշխանութեան կանչվեն նոր մարդիկ, որպէսզի ստեղծվի կառավարութիւն՝ ուժեղ ժողովրդի վստահութեամբ, որի գլուխ պէտք է կարգվի նա, ում հաւատում է երկիրը»։

Այս ռեզոլիւցիան լսվեց իրաւասուների մեծամասնութեան ծափահարութեամբ, որից յետոյ դումայի նախագահը կարդում է 18 իրաւասուների ստորագրութեամբ յայտարարութիւնը և նրանց ներկայացրած հետևեալ ռեզոլիւցիան.

«Պետրոգրադի քաղ. վարչութիւնը որոշում է ամենահպատակօրէն շնորհակալութիւն յայտնել մեծ, միաբան և դրանով անյաղթելի Ռուսաստանի Գերագոյն Պետին՝ զօրքի և նաւատորմի գլուխ կանգնելու որոշման համար և պատերազմը շարունակել մինչև լիակատար յաղթանակը, յայտնել վստահութիւն, որ կը ստեղծվի մի կառավարութիւն, ուժեղ՝ ժողովրդի վստահութեամբ, և պատրաստակամութիւն՝ տալ ոչ միայն իրանց միջոցները, այլ և կեանքը հայրենիքի պաշտպանութեան մեծ և սրբազան նպատակի համար»։

Որովհետև դուման արդէն ընդունել էր ռեզոլիւցիա, այդ պատճառով 18 իրաւասուների ռեզոլիւցիան մտցվել է դումայի օրագրի մէջ։

Քաղաքագլխին յանձնարարվեց Թագաւոր Կայսրի բարեհաճութեանը ներկայացնել դումայի ընդունած ռեզոլիւցիան։

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Գրական-Գեղարվեստական Սալօնը կազմակերպում է հայերէն և անգլերէն լեզուների դասընթացներ, ուր պէտք է աւանդեն Հայաստանից փախստական ամերիկական միջնակարգ դպրոցների ուսուցիչները։ Դասընթացները կը բացվեն Գրական-Գեղարվեստական Սալօնի ձմեռային բնակարանում։ Ուսումը կը սկսվի սեպտեմ. 15-ից։ Ցանկացողները հրաւիրվում են ցուցակագրվել «Մայր Հայաստանցիների» ապաստարանի գրասենեակում—Мих. пр. 197.

Ստացվել են նուէրներ՝

Զաքաթալայից՝ Աստուածատուր Բէկ-Յովսէփեանից 1 ր., Վեատկից՝ Խ. Մ. Արեշատեանից 5 ր. (պատկեր. վճար.), Իւզովկից՝ Միհրան Տօչանեանից՝ Միհրան Տօչանեանից 5 ր. (պատկեր. վճար)։

«Тифл. Лист.»-ի միջոցով՝

Ս. Բ. Մ. և Ն. Բ. Կ. քոյրերից 25 ր.՝ Ս. Դ. Դաւթեանի դագաղին պսակ դնելու փոխարէն։

«Մշակի» միջոցով՝

Սարատովից՝ Աւագ Հախվերդեանից 10 ր., Գրիգորիօպոլից, Յար. ք. Տէր-Ենօքեանից 5 ր., Զիւլէյից՝ տեղական հայ հասարակութիւնից 56 ր., Սկոբելեվից՝ Զ. Սուլխանեանից 5 ր., Նովօրոսիյսկից՝ եղբ. Փափիկեաններից, Երանոս Յ. Խաչիկեանից և Մ. Մարիմեանից 6 րուբլի։ Տ. Նազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Աւազակութեան անաջող փորձեր

Սղնախ, 30 օգոստ.

Մօտ օրերս երկու անյայտ չարագործներ կէս գիշերին գնում են Նասօմխար և զարթեցնելով ժամկոչին՝ պատուիրում են նրան գնալ քահանայի մօտ, որը կենում էր երկրորդ յարկում, և պահանջել ու բերել նրանից 100 ր. փող, բացասական դէպքում ցած գալ գաւիթը։ Ժամկոչը, կատարելով չարագործների պահանջը, բարձրանում է վերև և զարթեցնում է քահանային։ Յակոբ քահանայ Գրիգորեանը իջնում է գաւիթը, բայց ոչ ոքի չը գտնելով՝ բարձրանում է և կրկին մտնում է անկողին։ Քիչ ժամանակից յետոյ ժամկոչը դարձեալ ծեծում է քահանայի բնակարանի դուռը, յայտնելով որ չարագործները կրկին եկան և պահանջում են 100 ր. կամ ցած իջնել։ Քահանան մերժում է չարագործների պահանջը և ներքև չի գնում։ Երրորդ անգամ ժամկոչը ներքևից գոռում է, որ չարագործները պահանջում են քահանայից դուրս գալ պատշգամբ։ Քահանան դուրս է գնում պատշգամբ և յայտնում է չարագործներին, որ ինքը փող չունի և, եթէ չեն հաւատում, կարող են ներս մտնել իր կացարանը և խուզարկել տունը, ուստի խնդրում է հեռանալ։ Չարագործները պահանջում են իջնել ներքև։ Քահանան չի կատարում նրանց պահանջը և մտնում է սենեակ, իսկ չարագործները, չը վստահանալով ներս մտնել քահանայի բնակարանը, հեռանում են։

Երկրորդ օրը քահանան և ժամկոչն իրանց ընտանիքներով փախան Նասօմխարից, իրանց հետ տանելով եկեղեցու սրբազան անօթները։ Դէպքի մասին գործակալն ու քահանան յայտնեցին գաւառապետին, որը, հանգստացնելով նրանց, ետ ուղարկեց քահանային և ժամկոչին, ուղարկելով՝ որպէս պահապան՝ ստրաժնիկին։ Գաւառապետը միևնոյն ժամանակ հարկաւոր հրամանն ուղարկեց Մաչխաանի գաւառամասի պրիստաւին։

Նասօմխարն անմարդաբնակ վայր է։ Վանքն անցեալներում մի քանի անգամ ենթարկվել է չարագործների յարձակման։ Ութը տարի առաջ չարագործները կողոպտեցին եկեղեցին և տարան սրբազան անօթները։ Դատարանը մէկ չարագործին, որը գտնվեց, դատապարտեց տաժանակիր աշխատանքների։

Անցեալ դեկտեմբերին Սղնախեցի վաճառական Սիմէօն Օնանեանը ստանում է նամակ, որով նրանից պահանջում էին 1000 րուբլի սպառնալիքներով։ Օնանեանը չի կատարում չարագործների պահանջը։ Սրանից յետոյ նա ձիով գնում է Նասօմխար աղօթելու։ Հասնելով վանքի մօտ եղած կալսերի այգուն՝ նրան պատահում են 3 չարագործներ, որոնք, ատրճանակ պարպելով՝ կանգնեցնում են ձին։ Չարագործները փայտով ծեծելով՝ կամենում են ցած բերել ձիուց և պահանջում են փող։ Բարեբաղդաբար մօտով անցնում են մարդիկ, որոնք, լսելով ատրճանակի ձայնը, հասնում են օգնութեան և ազատում են Օնանեանին մահից։ Չարագործներից մէկը բռնվում է և յանձնվում զինւորական դատարանին, որը դատապարտեց նրան 8 տարվայ տաժանակիր աշխատանքների։ N. N.

Կեանքը մեզանում

Խանքենդ, 23 օգոստոսի

Տեղիս եկ.-ծխ. դպրոցն այս քանի օրս կը բացվի։ Մինիստրական դպրոցը կանուխ բացված լինելով (թէև կանոնաւոր ուսումը դեռ չեն սկսել)՝ իր մէջ է ընդունել ուսման վարձ վճարող աշակերտ-աշակերտուհիներին։ Միակ դպրոցը պէտք է, ինչպէս նախորդ տարիներում, այս տարի եւ ընդունէ չքաւոր դասի երեխաներին ձրիաբար։

Դպրոցի համար հրաւիրված է մի գիմնազիավարտ վարժուհի՝ 500 ր. ռոճիկով։ Անցեալ տարվայ ուսուցիչ Պօղոս Մկրտչեանը, որ պարտաւորվել էր նաև երգեցիկ խումբ պատրաստել եկեղեցու համար, չը կատարեց իր պարտականութիւնը, ուստի և այս տարի չը հրաւիրվեց։

Դպրոցի համար հոգաբարձութիւնը դիմել է Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին՝ դպրոցիս մի որոշ նպաստ յատկացնելու համար, սակայն ահա երրորդ ամիսն է՝ ոչ մի պատասխան չէ ստացել, որպէսզի ըստ այնմ որոշէ իր անելիքը։

Տեղական ժողովուրդը ոչնչով չէ օգնում դպրոցին, որովհետև հնարաւորութիւն չունի օգնելու։ Բացառութիւն կազմող ունևորներն էլ մատների արանքով են նայում դպրոցին։

Դպրոցի ներկայ շէնքը անհամապատասխան և անյարմար լինելով, հոգաբարձութիւնը խնդրամատոյց է եղել բագւաբնակ տիկ. Մարիամ Կրասիլնիկեանին, որպէսզի իր՝ Խանքենդում ունեցած տան մի ազատ մասը յատկացնէ դպրոցի համար։

Կարծում ենք՝ տիկ. Կրասիլնիկեանը չի մերժի հոգաբարձութեան խնդիրքը, որով բարի անուն կը վաստակէ իրան յարգող խանքենդցիների մէջ։

Այստեղ կեանքը մեռած է. ամեն ինչ թանգ. պտուղ չը կայ և եղածն էլ անմատչելի գներով են ծախսում։ Վերջերս դեզինտերիայի պէս մի հիւանդութիւն կայ ժողովրդի մէջ։ Բժշկից զուրկ ենք։ Ա. Ա.

Հոգաբարձական ընտրութիւններ

Քիշինև, 10 օգոստոսի

Հասարակական կեանքն ընթանում է խաղաղ։ Կայացաւ ծխ. ժողով երեսփոխ ընտրելու համար։ Ժողովը միաձայն ընտրեց վաղուց ցանկալի, տեղիս յայտնի բարերար, երգ.-հաւատարմատար Յ. Բ. Բաղդասարեանին։ Նորընտիր հոգաբարձական կազմի մէջ մտած են՝ Բ. ք. Ղազանչեան, Գ. Ախանեան (հաշտ. դատաւոր), Ն. Մուրաչեան, իրաւաբան Դ. Զախարեան, Ն. Ալլաչ և բժ. Յ. Գիւլխանդանեան։

Ունենալով այսպիսի աշխոյժ և գիտակից հոգաբարձական կազմ, յոյս ունենք՝ որ ներկայ կազմի օրով հասարակական զանազան կարևորագոյն հարցեր դրական լուծում կը ստանան և տեղիս միակ ազգային կուլտուրական հիմնարկութիւնը՝ դպրոցը աւելի լաւ հիմքերի վրա կը դրվի։

Գ. Փարաջանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Թագաւոր Կայսրի՝ բանակի գլուխ կանգնելու առիթով Թիֆլիսի մոլոկանների համայնքը սեպտեմբերի 2-ին մաղթանք կատարեց ռուս զէնքին յաղթութիւն շնորհելու համար։

◆ Երէկ Պետ. Դումայի անդամ Մ. Մ.

արիւնաթաթաւ երթը մարդկութեան վրայով, որ դու անձամբ այցելեցիր, քո շնորհիւ գոյութիւն ունեցող և քո խօսքով ներգործող Ֆօն-Տիրպիցին, որպէսզի արտայայտես քո երախտագիտութիւնը՝ անյատակ ովկիանոսում անպաշտպան կանանց և ծծկեր մանուկներին ջրահեղձ անելու համար. այս բոլորը խօսում են քո մասին։

III

Դէպի քեզ նախանձ գոյութիւն չունի, բայց դու պժգալի ես, Վիլհէմ։ Եւ քեզ սպասող պատուհասի չափը մեծանում է, որովհետև ազգերի դատաստանը ընկնում է քո ժողովրդի վրա, և նա կը կրէ արժանի պատիժը։ Մեր երկիրը շատ անգամներ է պատերազմ մղել։ Մենք յաճախ զարնվել ենք ֆրանսիացիների հետ նախկին ժամանակներում, իսկ այժմ Ֆրանսիան մեզ հետ է, ընդդէմ քեզ։ Մենք բաղխվել ենք ռուսների հետ, իսկ այժմ Ռուսաստանը մեզ հետ է, ընդդէմ քեզ։ Մի քանի տարի առաջ մենք ընդհարվել ենք բուրերի հետ, իսկ այժմ բուրերը հաւատարիմ մեր դաշնին՝ միացել են մեզ հետ, որ կռւում մասնակցեն մեր թշնամիների դէմ։ Մեր բոլոր նախկին թշնամիների հետ մենք հաստատել ենք բարեկամական յարաբերութիւններ, և աշխարհային խնդրի միահամուռ իրագործման արգելք չը գտնվեց։

Դու մեր մի տեսակի թշնամին ես։ Այն չափով, որ դու սարսափ ես կուտակում, մի՞թէ չես տեսնում, որ անէծքի և վրդովմունքի մակընթացութիւնն աճում է։ Դու արդեօք չե՞ս խոստովանում, որ խմորումը այստեղ Անգլիայում և Ֆրանսիայում, և հենց առ հասարակ ընդհանուր վրդովմունքի խորը բարձրանում է ամեն մի երկրից, մինչև անգամ քո ոչ վաղուցվայ դաշնակցի երկրից, Իտալիայից, աճում է սպառնալիքը քո գահին, քո ցեղին։ Չե՞ս տեսնում արդեօք, որ բոլոր աշխարհի դատավճիռը ուղղված է քո դէմ։

Դու կը տեսնես, որ Եւրոպան վճռել է ազատվել քեզանից և քո օջախից։ Ազգերը պահանջում են, որ քո տան յոյս կրօնպրինցը (թագաժառանգը) հետևէր քեզ աքսորման մէջ։ Ով քո արքայական տան ժառանգը կարող է լռելեայն չը բարձրացնելով ձեռը ի պաշտպանութիւն զրկվածների, դիտել, թէ դու ինչպէս ջնջում ես ծերերին թնդանօթների առաջ, թէ ինչպէս քո ժողովուրդը լլկում է կանանց և հաշմանդամ դարձնում մանուկներին, որոնց յօշոտված մարմինները զինւորների սուինների ծայրերին էին զարդարում, այդ միայն ապացոյց է նրան, որ այլասերված պետի քայքայումը փոխանցվել է և աճում է նրա շառաւիղների մէջ։

Եւ Հօհենցոլլերնեան տան հետ պէտք է նոյնպէս անհետ կորչեն մարդասպանները և աւազակները, որոնք նրան ծառայում էին—Ֆօն-Տիրպիցը, որը շարունակում է ծովի վրա դժոխային աշխատանքը, Ցեպպելինը, գիտութիւնը ծաղրի դարձնող և շահագործող՝ երկնքից կոտորած անելու օրից։ Եւ բոլոր քո գեներալները, որոնք կը մեղադրվեն ամբարշտութեան մէջ, պէտք է քշվեն դատաստանի և սատանան առջևը։

Ինչպէս մարդասպաններ՝ այդ բառի բուն իմաստով՝ և ինչպէս անպատուված երկրի գործիքներ, նրանք միայն կախաղանի են արժանի։ Կը մնայ քո ժողովուրդը, գերմանացիները, որոնք կը շարունակեն իրանց գոյութիւնը, երբ դու կը մեռնես։ Նրանց ամեն մէկի վրա, շատ սերունդներ, պէտք է ընկնի ներկայ չարագործութիւնների ստուերը։ Ուրիշ երկրի ազնիւ մարդը քո ժողովրդի ներկայացուցչին մօտենալու ժամանակ պէտք է մի կողմ խուսափի. նրա պարզած աջ ձեռքը պէտք է անգիտանայ, նրա խօսքին չը պէտք է հաւատայ և կասկածով վերաբերվի, մինչև անգամ՝ եթէ նրա երեսը պերճախօսութեամբ խոստանայ այն, ինչ որ տասն տարի առաջ դու մեզ խոստացար։ Մեր վրա լուրջ պարտականութիւն է դրված։ Սև չարիքը, որի դէմ մենք մարտնչում ենք, մեզ համար այդ պատերազմը սրբազան է դարձնում, իսկ Եւրոպայում տեղ չը կայ այն մարդուն, ով անուանում է իրան թագաւոր և արտայայտում է աւելի գթասրտութիւն, քան անագորոյն գազանը վայրագ վայրում։

Վիլհէմ, ինչպէս այժմ, դու կանյայտանաս Եւրոպայի կեանքից և մենք մտածում ենք քո կորստեան մասին, ինչպէս անմաքուր էակի չքանալուն։ Դու, որ պարծենում ես Աստուծուն մօտ լինելովդ, թերևս կը գտնես կեանքիդ, վերջին տարիները չափազանց կարճ ժամանակամիջոց այն սոսկալի հանդիպման, որը սպասում է քեզ կեանքի այն կողմում, ցնխտված և պղծված քեզանով։ Հերովդէսի շարքում դատապարտված ես դու յաւիտենական ժամանակներ հաշիւներ մաքրել մանուկների կոտորածի համար։

(«Рус. Сл.») Թարգ. Ա. Բունիաթեան

Նովիկով, Մոսկվայի քաղ. դումայի իրաւասու Ս. Ա. Լուզինի հետ միասին առանձին գնացքով մեկնեց Սարըկամըշի կողմը, իր հետ տանելով Մոսկվայի ընծաները զօրքերին բաժանելու։

◆ Թիֆլիսի ուսումնար. հոգաբարձ. խորհրդի վերջին նիստում, ուր նախագահում էր հոգաբարձու Րուդոլֆը, ներկայ էր միայն Կարսի շրջանի ներկայացուցիչ Բղնունին։ Այդ նիստում քննվեցին մի շարք կարևոր գործեր։ Այսպէս, օրինակ, քննվեց Վարշավայի և Րիգայի անասնաբուժարական ինստիտուտները նա Վլադիկավկազ, Րիգայի պոլիտեխնիկումը՝ Թիֆլիս և արևմտեան շրջանի ուսուցչական սեմինարիաները՝ Կովկասի ուսումնարանական շրջանը փոխադրելու հարցերը։ Խորհուրդը որոշեց այդ քաղաքներից պահանջել անհրաժեշտ տեղեկութիւններ, որոնց ստացումից յետոյ միայն կարելի կը լինի այդ դպրոցները փոխադրել Կովկաս։ Խորհուրդը այդ նիստում հաւանութիւն տուեց, որ առաջիկայ տարվանից Մայկոպում բացվի տղայոց ուսուցչական սեմինարիա, իսկ Շուշում՝ արհեստաւորաց դպրոց։

◆ Նահանգապետը քաղ. վարչութեան ուշադրութիւնն է հրաւիրել այն բանի վրա, որ քաղաքում շաքար քիչ կայ, և առաջարկել է միջոցներ ձեռք առնել, որ ազգաբնակութեան շաքարը ապահովվի։ Քաղ. վարչութիւնը իր հերթին դիմեց Բաթումի քաղ. վարչութեան, խնդրելով բացատրել թէ ինչ կերպով կարելի է շաքար ձեռք բերել Բաթումում (րեկվիզիայի ենթարկած) և առևտրա-տնտեսական ուսադ-վերատեսուչ Ս. Շահվերդեանին, որ ուղարկված է Րոստով, հեռագրեց մեկնել Խարկովի շրջանը և այնտեղից հաղորդել, թէ ուր և ինչ գնով կարելի է շաքար գնել քաղաքի ազգաբնակութեան համար։

◆ Քաղ. վարչութիւնը կազմակերպել է մատակարարական առանձին յանձնաժողով, որը որոշել է ինչպէս մթերքների գները, նոյնպէս և վաճառելու սակագինը։ Այդ յանձնաժողովի կազմի մէջ մտնում են քաղաքի բոլոր կօօպերատիվ և սպառողական ընկերութիւնների ներկայացուցիչները։

◆ Ստացանք տիկ. Նադէժդա Վարդապետեանից 20 հատ շալիկ որբերի համար՝ յանձնելու Նպաստամատոյց Ընկերութեան։

◆ Թիֆլիսի զինուորա-արդիւնաբերական կոմիտէտի վերջին նիստում ինժ. Սուշչևսկի յայտնեց, որ պետական պաշտպանութեան համար իր կազմակերպած կանանց աշխատանքի կոմիտէի մէջ մինչև օգոստոսի 31-ը մտել են 1950 աղջիկ և կին, որոնք իրանց աշխատանքն են առաջարկում պաշտպանութեան գործի համար։

◆ Շաբաթ օրը, ամսիս 5-ին, երեկոյեան ժ. 7-ին Հայ Դրամատիկական ընկերութեան խորհրդի նախաձեռնութեամբ, հրաւիրվում են հայ բեմի բոլոր դերասան-դերասանուհիները ընկերութեան գրասենեակը, խորհրդակցելու առաջիկայ թատերաշրջանի մասին։

◆ Այսօր Զուբալովի Ժողովրդական Տանը գործող Հայկական Դրամատիկ Խմբակցութիւնը սեզոնի բացման առթիւ բեմ է հանում «Դաւիթ-Բէկ» պիէսը, որը փոխադրված է Րաֆֆիի համանուն վէպից։

◆ Ս. Կարապետի (Հալաբարի) եկեղեցական դպրոցի հոգաբարձութիւնը ձրիաբար բաց է անում ա. զուգընթաց բաժանմունք միջոցներից բոլորովին զուրկ գաղթականների 40–45 որբ երեխաների համար։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Պետրօգրադից, որ Գորեմըկինի մօտ կայացած խորհրդակցութեան մէջ անհրաժեշտ է համարվել արձակել Դուման մինչև հոկտ. 15-ը կամ նոյնիսկ մինչև նոյեմբ. 15-ը, յայտարարել ազգաբնակութեանը թէ բարենորոգումները կը լինեն վերից և գործադրել 87-դ յօդուածի կարգով առաջադէմ բլոկի ծրագրի մի մասը, որպիսին ընդունելի է կաբինէտի համար։ Այդպիսի պայմաններում, ինչպէս կարծում է կաբինէտը, Դումայի սկզբունքների ընդհատումը առաջ չի բերի տրամադրութեան անկում երկրի մէջ։

◆ Պետրօգրադում յայտնի դարձաւ, թէ կաբինէտը փորձում է համաձայնութիւն կապել բլոկի հետ։ Եթէ բլոկը հրաժարվի իրագործել բարենորոգումները ներկայ կաբինէտի հետ միասին այն շրջանակներում, որ մատնանշել է վերջինը, Դուման կարձակվի։ Համաձայնութեան շանսերը քիչ են։

◆ Պարզվում է, որ Դուման արձակվելու է այս երկու օրում, այն էլ ոչ սովորական հրամանով, այլ առանձին ակտով, որի մէջ իբր շնորհակալութիւն է յայտնվելու օրէնսդրական հաստատութիւններին կառավարութեանը աջակցելու համար։

◆ «Н. В.» գրում է, որ ժողովրդի առաջ կան երկու խոշորագոյն խնդիրներ— զօրքի պիտոյքների հայթայթումը և կռիւ գերմանական հսկայական ազդեցութեան դէմ թիկունքում. բայց այդ խնդիրները, լրագրի ասելով, անկարելի է իրականացնել առանց Պետական Դումայի աջակցութեան։

◆ Քաղաքական շրջաններից յայտնում են, որ Գորեմըկինի տեսակէտն է, որ կառավարութիւնը չէ կարող տարվել օրէնսդրական փորձերով, որոնք ընդունակ են խախտել միութիւնը։ Կառավարութիւնը պարտաւոր է ձգտել մի նպատակի՝ հասարակական ուժերի հետ միասին կազմակերպել թիկունք՝ յաղթութիւն ձեռք բերելու համար։

◆ Պ. Դումայի անդամների տեղեկութիւնների համաձայն, Պ. Դումայի զբաղմունքները դադարելու են մինչև նոյեմբ. 1-ը։

◆ Մայրաքաղաքի լրագիրները լի են Պետական Դուման արձակելու տեղեկութիւններով, որոնք ճնշող տպաւորութիւն են գործում կաբինէտի անդամների վրա։

◆ Սեպտ. 10-ի մօտերը մինիստրների խորհուրդը առանձին նիստ է գումարելու կառավարութեանը վերաբերեալ հարցերը քննելու համար։

◆ Պետրօգրադում տեղի ունեցաւ պրոֆ. Լուտուգինի հսկայական թաղումը։ Երկու դիակառք լի էին պսակներով։ Թաղմանը ներկայ էին և քաղաքական ճառեր արտասանեցին պատգամաւորներ, պրոֆէսորներ, գրականագէտներ և բանւորներ։ Ցուղարկաւորութեանը ներկայ էր մեծ թւով ոստիկանութիւն, սակայն, չը նայած կարմիր ժապաւէններին և պարզ մակագրութիւններին, ոչ մի միջադէպ չեղաւ։

◆ «Б. В.»-ն գրում է. «Ջունկովսկիի պաշտօնանկութիւնն այն պատճառով էր, որ նա կարևոր գործեր էր տնօրինում առանց ոստիկանութեան դեպարտամենտի տնօրինութեան։ Այսպէս Մոսկվայի անկարգութիւնների ժամանակ Մոսկվայի պահնորդական բաժանմունքը նոյնիսկ չը յայտնեց ոչինչ ոստիկանական դեպարտամենտին»։

◆ «Нов. Вр.»-ի ասելով, աջակողմեանների լիդէր Իշխ. Բոբրինսկին զրուցել է Միլիւկովի և Կրուպէնսկիի հետ բոլոր քաղաքական կուսակցութիւններին միացնելու հնարաւորութեան առիթով։ Աջակողմեանները գտնում են, որ ներկայ կառավարութիւնը բաւականին եռանդով է և առաջարկում են ներքին գործերի պաշտօնի համար Կրժանովսկիին։

◆ «Н. В.»-ի ասելով, մինիստրների խորհուրդն անհնարին գտաւ, առաջադիմական բլոկի առաջարկութեան համաձայն, ներկայումս կազմել հասարակական մինիստրութիւն. ամնիստիան վերաբերում է Միապետի իրաւասութեանը, հրէական հարցում նոր քայլեր անել անկարելի է. ֆիննական հարցում իշխանութիւններին ցուցումներ են տրված խուսափելու սուր դրութիւնից և վարվել հաշտարար ոգով։

◆ «Н. В.»-ի ասելով, Րուխլովը հնարաւոր է գտել թոյլ տալ ամեն տեղ ընդունել ծառայութեան նաւերի մէջ կանանց՝ պայմանով միայն, որ նաւապետները լինեն տղամարդիկ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Թիֆլիսի վրաց հացթուխների «Րաճա» ընկերութիւնը դիմել է քաղաք. վարչութեանը և խնդրել, որ վարչութիւնը տայ նրանց 100 վագոն ալիւր, որովհետև այլ կերպ հնար չը կայ կռւել արհեստական կերպով գները բարձրացնող ալիւրի խոշոր պահեստներ ունեցողների դէմ։

◆ Վրաց Ինտելիգենցիայի մէջ ծագել է մի համակրելի միտք։ Բակուրիանիի մօտ գտնվող Ծաղվերի գիւղում, որ օդասուն և առողջարար ամարանոցի հռչակ ունի, հիմնում են երկու տուն՝ իւրաքանչիւրը բաղկացած 6 սենեակից։ Տներից մեկը յատկացվելու է վրաց հիւանդ գրողներին, միւսը վրաց այն գրողներին, որոնք հանգստի կարօտ ունենալով հանդերձ՝ միջոց չեն ունենում ամարանոց վարձելու։

Այդ շինութիւնները կառուցվելու են հասարակութեան միջոցներով։

◆ Վրաց հասարակական հիմնարկութիւններից ընտրված այն խառն բիւրոն, որ կոչված է ժողովրդի մէջ տարածվող սովի դէմ կռւելու, գոյութիւն ունեցող մանր վարկային և փոխատու-խնայողական ընկերութիւններին ուղարկել է հարցաթերթեր, որոնցով խնդրվում է տեղեկացնել բիւրոյին, թէ իւրաքանչիւր շրջանում որքան սերմացուի և ալիւրի պահանջ է զգացվում։ Բիւրոյի համար այս տեղեկութիւնները հարկաւոր են, որպէսզի նա բաւարար չափով ձեռք բերի սերմացու և ալիւր ու էժան գներով վաճառի ժողովրդին։

ՄԱՄՈՒԼ

«Рус. Вѣд.»-ն իր առաջնորդողում հետևեալն է ասում Թագաւոր Կայսրի զօրքի գլուխ կանգնելու և Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի մասին։

Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը ռուս բանակի գլուխ կանգնեց հէնց պատերազմի յայտարարութիւնից յետոյ և իր բարձր ու պատասխանատու պաշտօնում մնաց 13 ամսից աւելի։ Այդ ժամանակի ընթացքում ռազմական բաղդը փոփոխական էր և աջողութիւնները բազմիցս անգամ փոխարինվում էին անաջողութիւններով և ընդհակառակը։ Ներկայ պատերազմի պատմութեան ժամանակը դեռ չի եկել, և այժմ դժուար է խստութեամբ որոշել Գերագոյն Զօրահրամանատարի կատարած դերը անցած անցքերի մէջ։ Միայն մի բան կարելի է ասել կատարեալ վստահութեամբ, որ Մեծ Իշխանը օժտված էր գլխաւոր հրամանատարի գնահատելի յատկութեամբ. զօրքը հաւատում էր նրան, և նա նրանց շրջանում վայելում էր հեղինակութիւն, աչքի ընկնող ժողովրդականութիւն։ Այդ հեղինակութիւնը չը տատանեցին վերջին ժամանակի անաջողութիւնները։ Զօրաբանակը և ռուս հասարակութիւնը այդ անաջողութիւնները վերագրեց գլխաւորապէս թիկունքի անկազմակերպութեան, ռումբերի և ռազմական ուրիշ նիւթերի բացակայութեան, և ընդհանրապէս ռուսական կեանքի հիմնական խառնաշփոթութեան։ Հաւատալով իր Գլխաւոր հրամանատարին, հաւատալով միևնոյն ժամանակ ռուս ժողովրդի ստեղծագործ ուժին, մեր բանակները կայունութեամբ տարան իրանց բաժին ընկած փորձութիւնները։

Թագաւոր Կայսրը զօրքերի հրամանատարութիւնը ստանձնում է ծանր րոպէին, երբ թշնամու ուժերը արդէն Ռուսաստանի խորքն են մտել։ Բայց րոպէի ծանրութիւնը թուլանում է ինչպէս հասարակական ուժերի կազմակերպութեամբ, նոյնպէս և իրերի հաստատ վճռականութեամբ, որը արտայայտվեց հասարակական վերջին յայտարարութիւնների մէջ՝ տալ ամեն տեսակ զոհ յաղթութեան հասնելու համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 31 օգոստոսի

Թիֆլիսի ժողովարանը անցեալ ամառները, ինչպէս գիտենք, վարձում էր սիմֆոնիական օրկէստր և իր բազմաթիւ յաճախորդներին կարելիութիւն տալիս շաբաթական երկու օր վայելել զուտ գեղարուեստական հաճոյք։

Այս ամառ ժողովարանի աւագների խորհուրդը, երևի տնտեսութիւն անելու մտքով, բաւականացաւ 15-16 հոգուց բաղկացած համերգային օրկէստր հրաւիրելով՝ որ նուագում էր համարեա ամեն օր, ղեկավարութեամբ երաժշտագէտ Գր. Միրզայեանի։ Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ այդպիսի մի փոքրակազմ օրկէստրով պ. Գր. Միրզայեան եկաւ նորից ապացուցելու իր ունեցած ընդունակութիւնները երաժշտական ասպարէզում՝ կատարել տալով օրկէստրին երբեմն այն օրինակ սիմֆոնիական աջող նօմէրներ, որպիսիք սովոր ենք լսել աւելի հարուստ կազմված օրկէստրների կողմից։

Այժմ, ինչպէս լսում ենք, ժողովարանի անդամների և հիւրերի որոշ շրջաններում մտադրութիւն կայ գրաւոր դիմում անել աւագների խորհրդին՝ խնդրելով ձմերային շէնքում էլ, միւս ակումբների օրինակով, ունենալ լարանւագ համերգային օրկէստր, որպէսզի ժողովարանի յաճախորդները ձմերային սէզոնին նոյնպէս կարողանան ստանալ գեղարուեստական բաւականութիւն։

Յուսով ենք, որ ժողովարանի աւագների խորհուրդը բաւարարութիւն կը տայ վերայիշեալ ցանկութեան, մանաւանդ որ՝ համերգային օրկէստր ունենալու համար, ինչպէս տեղեկացանք, այնքան էլ մեծ ծախք չէ պահանջվում։

Ժողովարանի յաճախորդներից մեկը

—

Թիֆլիս, 31 օգոստ.

Թոյլ տուէք, յարգելի խմբագիր, ձեր լրագրի միջոցով գիտակ անել մեր ծանօթներին ու բարեկամներին, մանաւանդ Ամերիկայի Ֆրէզնօ քաղաքում գտնվող իր հօրեղբայրներ Բաղդասար և Յովհաննէս Վարդապետեաններին որ ես և Իշաբեր, Կարապետ, Կալիպսէ, Երւանդ և Վարդան Վարդապետեաններս անվտանգ հասած ենք Թիֆլիս և կը գտնուենք հոս։

Վանեցի Գայիանէ Մկ. Վարդապետեան

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՍ Պ. ԳԷՈՐԳ ՓԻՐՈՒՄԵԱՆԻՆ

Նախ և առաջ սրբազան պարտքս եմ համարում յայտնել հասարակութեան, որ ես երբէք չեմ թոյլ տայ ինձ՝ զբաղեցնել մամուլի սուղ էջերը իմ անձնական հաշիւներով, ինչպէս ջանում է պ. Փիրումեանը ապացուցանել այդ։

Պարոն Փիրումեան, դուք գրում էք, թէ որովհետև անբաւարար էր գումարը, պէտք է շարունակէիք հանգանակութիւնը։ Ապա հարցնում եմ. ինչու չէիք շարունակում, ինչու չէիք դիմում դերասաններից շատ-շատերին, որոնց թւումն եմ և ես. ինչու էիք լռել, ինչու էիք սպասում, որ մենք դերասաններս մօտենայինք ձեզ, քանի որ մեզանից շատերը կարող էին չիմանալ այդ հանգանակութեան մասին, որովհետև դա [illegible] դերասանների որոշում չէ եղած, այլ մի որոշ շրջանի։

Ինձ թւում է, թէ երկու տարվայ ընթացքում՝ Թաւրեանի շիրմի համար հանգանակված գումարը ոչ թէ պիտի հասած լինէր շուրջ 30 րուբլու, այլ ամենաքիչը՝ այդ գումարի մի քանի անգամին։ Այդ հանգամանքի գլխապատճառն, ըստ իս, պէտք է փնտռել՝ Ժողովրդական Տան հայկական սեկցիայի ձեր խճճած հաշիւներում, երբ դուք այդ հիմնարկութեան և վարչութեան անդամ էիք և գանձապահի օգնական ու գործավար։ Ուրեմն, եթէ իրօք կամենում էք, որ հասարակութեան աչքին լինէք միանգամայն արդար, ապա այլևս ուրիշների բերանով մի արդարացնէք ձեզ, ոչ էլ հասարակական հարցը դնելով անձնական նեղ շրջանակներում, ոչ էլ ազդեր տալով ու ցրելով փողոցներում։ Նման գործելակերպը, ի նկատի ունեցէք, կարող է միանգամայն հակառակ հետևանքի հասնել, քան դուք կամենում էիք։

Ամօ-Խարազեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

№			Ժամ	
№ 3	դէպի	Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	»	Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6 (արագ)	»		12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	»	Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	»	Ջուլֆա	8 ժ. 53 ր.	երեկ.
	»	Բօրժօմ	3 ժ. 20 ր.	ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№		Ժամ	
№ 3	Բագուից —	13 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր.	առաւ.
	Բօրժօմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ՝)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն.
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—3 ժ. ներքին, ջղային եւ երեխայոց հիւանդութ. և ծանկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հիւնդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկեցում.։
ԿԻՆ-Բ. ՄԻՇԱ ՏԵՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—147

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սոլոմոնովսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան. Սոլոմոնովսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—78

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԳԻՒՏ

Վերադարձնում է ույժերը, կայտառութիւնը և տղամարդութիւնը։

Ցաւերից չարչարվել, ասում է պրոֆ. Ժակ Լերու-Սինօ, կրում էի հոգեկան տանջանքներ. ես ամաչում էի ուղիղ նայել մարդկանց երեսին, թոյլ, հիւծված, կենսական ույժերս ու սեռական եռանդը վերադարձնելու յոյսս կորած, ես չէի կարողանում առողջ տղամարդու վայել դիրք պահել հասարակութեան մէջ. ես սկսեցի ճանապարհորդել մի երկրից միւսը, խորհրդակցել յայտնի բժիշկների հետ և փորձել ամեն տեսակ բժշկական սիստեմներ, բայց վերջ ի վերջոյ զգացի, որ քայքայվում եմ հոգեպէս, ֆիզիքապէս ու բարոյապէս և սարսափում էի անյուսալիութեան կամ գժանոցի մտքից։ Բարեբաղդաբար ինձ աջողվեց գնալ Պարիզ, ուր իմ մի բարեկամը բժշկվում էր ջղայնութիւնից. նա խորհուրդ տուեց ընդունել ֆօսֆոր, այսինքն դոկտ. Ֆլէզի ՍՕՄՈՒԼՕԼԸ։ Ես չը հաւատացի, բայց որովհետև նա ընդունել էր և դրանով կրկին վերադարձրել իր առողջութիւնը, ուստի ես էլ որոշեցի փորձել. նա վերադարձրեց իմ նախկին կայտառութիւնը և ջղային ույժը. ներմուծեց արեանս մէջ նոր կեանք և իմ մարմնի բոլոր օրգաններին տուեց եռանդ և երկրաստղական ույժ։ Մեծ էր իմ ուրախութիւնը, երբ անօգուտ կերպով շատ հռչակված դեղեր ընդունելուց յետոյ, պատահաբար ծանօթացայ այդ միջոցի հետ և բժշկվեցի։ Այդ բոլորը ինձ աջողվեց ամենահասարակ սիստեմի միջոցով, որը ամեն մէկը կարող է գործածել աննկատելի կերպով։ Իմ ուրախութիւնը մեծ է, և ես որոշեցի իմ բաղդաւորութեան գաղտնիքը հաղորդել նոյն ցաւով տառապողներին. դա դոկտ. Ֆլէզի ֆօսֆորն է, այսինքն Սօմուլօլը, որը թոյլ, ջղային, ընկճված ու սեռական եռանդը կորցրած հազարաւոր մարդկանց կամքն է։ Ներկայումս այդ դեղով ես բժշկվում եմ և լաւ հետևանքների հասնում։ Կլինիկա ջղային և ներքին հիւանդութիւնների՝ դոկտ. Ժակ Լերու-Սինօ։

Իսկական Սօմուլօլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի արկղը ունի գործարանի դրոշմը. „Institut D-r Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք ձեր հրաշալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի եւս ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսորները, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Институтъ Д-ра Кальве, Тифлисъ, Эриванская площ., Пушкинская 3, отд. 11|2, верхній этажъ, д. Кредитнаго О-ва (Խնդրեմ հասցէն դրել լաւ, ինչպէս որ ռուսերէն գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 50 կօպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լրիվ, ճանապարհածախս չի վճարում։ (ու.) 609. 10—1

ՅՈՎՀ. ՄԱԼԽԱՍԵԱՆ և ՆԱՐ-ԴՈՍ
„ԳԻՐ ԵՒ ԿԵԱՆՔ"
Հայոց լեզուի դասագիրք դպրոցների առաջին և բարձր դասարանների և պետական դպրոցների համար։
Գինն է 1 ր. 25 կ.
Գումարով առնողներին 20% զեղչ։
Դիմել՝ Թիֆլիսի հայ գրավաճառներին։
(կ.) 614. 2—1

Մեծ-Ղարաքիլիսայի
հայոց եկ.-ծխ. դպրոցի համար հարկաւոր է
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
17 գ. հայոց, 2 գ. ռուսն. և 5 գ. թւաբ. =24 գ., դասագինը 22 րուբլի։ Եթէ մեզնից անկախ պատճառով դասերը դադարեն՝ կը ստանայ ծառայած ժամանակի լրիւ ռոճիկը և չը ծառայածի 50%-ը։ Ուսում. վկ. պատճ. և խնդիրն ուղարկել հոգ. խորհրդի նախ. բժ. Ա. Վարդանեանի անունով։
612. 4—2 Հոգաբարձութիւն

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թւից)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
Դասընթացքը 4 ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։
Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատանը—Թիֆլիս, Նիկոլայէվսկայա փողոց, № 22. Տէլ. № 7—44.
(ե. ու. կ.) 487. 0—14

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՀԻՄՆ. Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
(Երկու սեռի համար)
Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ., № 24.
Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 10—12 ժ. առ., ժ. 5—7 երեկ.։
Զբաղմունքները կը սկսվեն սեպտեմբերի 21-ից։
Տեղեկութիւններ տրվում և ուղարկվում են ձրի։
(չ. ու. շ.) 589. 0—4

ԱՐՇԱԿ ՋԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ
կազմած
ԴԱՍԸՆԿԵՐ

Առաջին տարի այբբենարան-ընթերցարան	վեցերորդ տիպ	40 կ.
Երկրորդ տարի	վեցերորդ տիպ անփոփոխ	50 կ.
Երրորդ տարի	հինգերորդ տիպ ամփոփոխ	60 կ.
Չորրորդ տարի		70 կ.

Այբբենարանն ամբողջովին ձեռագիր. բոլոր տարիներում կան արտագրութեան համար ձեռագիր օրինակներ և զրուցատրական, շարադրական ու պարզ գծերով նկարչական պատկերներ։
Դասընկերն Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից թոյլատրված է որպէս դասագիրք։
Ցանկացողները դիմեն Թիֆլիս—«Գիր» գրավաճառանոցին, Երևան՝ «Արարատ» և Յովհաննիսեան գրախանութներին, կազմողներին Երևան՝ Թեմական դպրոց։
Գումարով առնողներին կը լինի զեղչ։ (ու. շ.) 578. 8—3

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.